(Վերա) մտածելով Չարենցավանի արդյունաբերական մշակութային ժառանգությունը և ստեղծարար տնտեսությունը «Մշակութային զարգացման ռազմավարության մշակման շրջանակներում»:

Չարենցավանի մշակութային ներուժի ուսումնասիրություն

2022

Մշակույթը հանուն կայուն զարգացման

Ռուզաննա Ծատուրյան-հետազոտության ղեկավար

Ռուզաննա Ծատուրյան-հետազոտության գեկավար
Համլետ Մելքումյան-հետազոտող
Մխիթար Գաբրիելյան-հետազոտող
Դիանա Հովհաննիսյան-հետազոտության ասիստենտ

(Վերա) մտածելով Չարենցավանի արդյունաբերական մշակութային ժառանգությունը և ստեղծարար տնտեսությունը «Մշակութային զարգացման ռազմավարության մշակման շրջանակներում»:

Ներածություն. Համայնքների զարգացման հնարավորությունները սովորաբար փոխկապակցվում են տնտեսության, մարդկային կապիտալի և/կամ տեղական աշխատաշուկայի կառուցվածքի հետ: Մինչդեռ հազվադեպ է, որ տեղական մշակույթը գիտակցվում և համարվում է էական գործոն համայնքահեն զարգացման նախագծերում[1]: Խնդիրն այն է, որ որ տնտեսական աճը, սոցիալական ներառականությունը և շրջակա միջավայրի նկատմամբ բալանսավորված վարքը չի կարողանում լիարժեք արտացոլել արդի հանրությունների բարդ կառուցվածքը[1]:

Տնտեսության և սոցիալական զարգացման մեջ մշակույթի և ստեղծարար արդյունաբերության դերի մասին գիտելիքը առայժմ հանրային օրակարգի մաս չէ: Թեպետ Հայաստանում մշակույթի և դրա դրսևորումների հանդեպ հարգանքին, այն հիմնականում դիտարկվում է տնտեսական և սոցիալական զարգացման օրակարգերից դուրս:

Չարենցավանը նախկին խորհրդային արդյունաբերական քաղաք է, որի ինքնությունը և պատմությունը ձևավորվել է արդյունաբերության շուրջ, ինչի շնորհիվ քաղաքն ունեցել է մշակութային զարգացած ենթակառուցվածքներ և հնարավորություններ:

Չարենցավանը Խորհրդային Հայաստանում կառուցված առաջին քաղաքն է:

Այն սկզբում կոչվել է Լուսավան: Իսկ գիտե՞ք, թե ինչու:

Այն կառուցվել է ոչ թե գոյություն ունեցող բնակավայրի հիման վրա, այլ որպես միանգամայն նոր խորհրդային ավանգարդ նախագիծ, որը գիտական նորարարության և արդյունաբերական նորարարության «լույսը» բերում էր մարդկանց կյանք: Լուսավան/Չարենցավանը կառուցվել է Գյումուշի հիդրոէլեկտրոկայանի կառուցման շրջանում, երբ անհրաժեշտ էր ներգրավել մեծաքանակ աշխատուժ «լույս» և էներգիա

[1] Culture for Sustainable Development, https://en.unesco.org/themes/culture-sustainable-development

ստեղծող կառույցում աշխատելու համար: Այս սիմվոլիկ կապերը նաև հիմնավորվում էին տեխնիկապես, երբ 1948թ հիշատակվում է Լուսավանը՝ որպես շրջակայքում էլեկտրական լույս ունեցող միակ ավան: Լուսավանը Չարենցավան վերանվանվում է 1967 թ. հայ հայտնի բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 70 ամյակի կապակցությամբ:

Չարենցավանը Գյումուշհէկի շինարարությունից հետո սկսում է զարգանալ որպես արդյունաբերական քաղաք, որտեղ կառուցվում և գործում է մեքենաշինական, գործիքաշինական և հաստոցաշինական արդյունաբերության հանգույց և այդպիսով իր ստեղծած արտադրանքով և դրանց կիրառման շնորհիվ «տարածվում» է ամբողջ Հայաստանի և Խորհրդային միության տարածքում:

Չարենցավանը ի տարբերություն Հայաստանի քաղաքների մեծ մասի, որոնք ունեցել են բնակիչներ, բնակեցվել է հիմնադրման պահից, նորաբնակներով, որոնք այստեղ էին եկել աշխատելու Հայաստանի տարբեր շրջաններից, ովքեր էլ հետագայում ձևավորել են բազմազանության ու նորարարության գաղափարներով հիմնված քաղաքը:

Ընդ որում այստեղ աշխատելու էին գալիս երիտասարդներ, գյուղացիներ, քաղաքացիներ Հայաստանի տարբեր շրջաններից, այստեղ բնակեցվում էին խորհրդային հայրենադարձության քաղաքականության արդյունքում Միջին Արևելքի, Իրանի և Եվրոպական երկրներից Խորհրդային Հայաստան տեղափոխված հայերը:

Աշխատուժի մեծ ներհոսք է եղել նաև Լեռնային Ղարաբաղից, երբ դեռևս Խորհրդային շրջանում Թալիշից, այլ տարածքներից հայերը տեղափոխվել են Չարենցավան աշխատելու և ապա հիմնական բնակության:

Բազմաթիվ մասնագիտությունների, աշխատուժի աճող պահանջարկի շնորհիվ այստեղ տեղափոխվում էին ԽՍՀՄ տարբեր ազգությունների մարդիկ. կանայք, տղամարդիկ, երիտասարդներ, որոնք այսօր արդեն այս ավանգարդ քաղաքի տարիքով ավագ բնակչությունն են:

Քաղաքի հյուրընկալ ինքնության և արդեն ձևավորված կապերի, ցանցերի արդյունքում արդեն 1980-ական թթ. վերջից-1990-ականներից Չարենցավանը ընդունել է Ադրբեջանից բռնի տեղահանված հայերին, ապա՝ 4-օրյա և 44-օրյա պատերազմների արդյունքում բռնագաղթվածներին, ովքեր քաղաքի ինքնության համար առանձնահատուկ դեր կարող են ունենալ:

Չարենցավանն ունի մոտ 40,000 բնակչություն: Չարենցավան համայնքի բյուջեից մշակույթի և ստեղծարար ոլորտի համայնքային կազմակերպությունների ֆինանսավորման համար ծախսվում է տարեկան շուրջ 200 մլն ՀՀ դրամ, ներգրավված աշխատակազմը՝ 200, սովորողները՝ 1200: Չարենցավան քաղաքում անցկացված կիրառական և կարիքների գնահատման տարբեր հետազոտությունները, սակայն, չեն դիտարկել տեղական մշակույթի դերը համայնքի զարգացման գործընթացն ավելի ամբողջական դարձնելու համար:

Փոխարենը, մշակույթն ածանցվել է տնտեսական և այլ գործընթացներին և չի դիտարկվել որպես անկախ ուժ:

Չարենցավանի մշակութային քաղաքականությունը դեռևս չունի հստակ ռազմավարություն և զարգացման տեսլական: Սակայն սա այն դեպքում, երբ մշակույթն այլընտրանքային հեռանկարների ձևավորման և բացահայտման այնպիսի ուժ և կարողություն ունի, որի արդյունքում հզորացնում է անհատների կարողությունները՝ մասնակցելու հանրային կյանքի ձևավորմանը որպես որպես ժողովրդավար քաղաքացիներ:2

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Քաղաքային մշակույթ և ժառանգություն» հայեցակարգի[2] ժամանակակից քաղաքների ճգնաժամը պահանջում է քաղաքային զարգացման նոր մոդել: Սա իրողություն է, որ բնորոշ է աշխարհի բազմաթիվ երկրների մեծ ու փոքր քաղաքներին, սակայն այն ավելի սուր է դրսևորվում հատկապես ետխորհրդային, զարգացման բազմաթիվ հիմնախնդիրներ ունեցող քաղաքային միջավայրին:

Քաղաքի սոցիալական խոցելիության և շրջակա միջավայրի վնասման կանխումից բացի, այս նոր մոդելը միտված է «վերամարդկայնացնելու» քաղաքային միջավայրը՝ թե՛ որպես ֆիզիկական տարածք, թե որպես պատկանելության զգացում ձևավորող միջավայր՝ մշակութային ինքնության տարածք:

Մշակութային ժառանգությունը (լինի նյութական, թե ոչ նյութական, նախաարդյունաբերական կամ հետինդուստրիալ), մեծ ներդրում ունի քաղաքների և համայնքների յուրահատուկ կերպարի և ինքնության ձևավորման, ներկայացման մեջ:

Այդ պատճառով այն կարող է մոբիլիզացվել՝ փորձելով ստեղծել տեղական մշակույթին հարազատ քաղաքային զբոսաշրջության փորձառությունների հարթակներ:

Հետազոտական թիմի ընդհանուր տեսլականը, որ ձևավորվել է դեռևս ծրագրային առաջարկում, Չարենցավանի՝ որպես խորհրդային արդյունաբերական երբեմնի կենտրոնի, բազմաշերտ մշակութային ժառանգությունը վերաիմաստավորելն է, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում այն որպես ինքնության և մրցակցային առավելության առանցքային բաղադրիչ դիտարկելը, որի ներուժի բացահայտմանն էլ ուղղված է այս հետազոտությունը:

Հետազոտությունն իրականացվել է մի քանի բաղադրիչով.

-ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել տեղեկան մշակութային քաղաքականության օրենսդրական հնարավորությունները՝ պետական քաղաքականության

[2] Cities, culture, creativity: leveraging…

https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000377427.locale=en

համատեքստում, տեղական մշակութային քաղաքականության մոտեցումները, ծրագրային փաստաթղթերում դրանց արտացոլվածությունը: [3]

-իրականացվել է Չարենցավանի բնակիչների՝ քաղաքի բրենդի, մշակութային ներուժի ու ստեղծարարության հնարավորությունների մասին առցանց հարցում: Այս հաշվետվության մեջ ներկայացված են վեկլուծության արդյունքները

-իրականացվել է Չարենցավանի խորհրդային արդյունաբերական ժառանգության և մշակութային տարածքների ախտորոշիչ քարտեզագրում, որի նպատակն էր քարտեզագրել, հավաքագրել տեղեկատվություն այս տարածքների, դրանց ժամանակակից վիճակի, խնդիրների մասին

-Իրականացվել է Չարենցավան համայնքի ստեղծարար արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների նախնական քարտեզագրում, նրանց հետ անցկացվել են դեմառդեմ հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությունը ներկայացված է սույն հաշվետվության մեջ:

Մշակութային քաղաքականության հիմնական ուղղությունները,

նպատակներն ու խնդիրները

ՀՀ-ում մշակութային կյանքի, մշակութային քաղաքականության կազմակերպումը և կարգավորումները մի քանի մակարդակում են.

Ա. մշակութային քաղաքականության օրենսդրական կարգավորումներ, ոլորտային քաղաքականության իրականացում (ԿԳՄՄՆ, մարզպետարաններ, այլ),

Բ. մշակութային քաղաքականության պլանավորում համայնքային մակարդակում (համայնքների սեփական՝ պարտադիր և կամավոր լիազորությունների շրջանակում),

Գ. մշակութային քաղաքականության իրականացում:

Իրականում այս մակարդակները փոխկապակցված են, փոխլրացնող, պայմանավորված ֆինանսների, մարդկային ներուժի, տեղական մակարդակում նախաձեռնությունների ու բազմաթիվ այլ գործոնների առկայությամբ:

Մշակույթի զարգացման ազատությունը ամրագրված է ՀՀ հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում:

Հոդված 15-ում արձանագրվում է, որ

1. Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը:

[3] Չարենցավան համայնքի մշակույթի տնտեսագիտական վերլուծությունը իրականացվել է այս ծրագրի շրջանակներում Հ. Նալբանդյանի կողմից և կներկայացվի առանձին փաստաթղթով:

2. Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:[4] Հոդված 43-ը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն»: [5] Սրանք, ըստ էության, բազային իրավունքներն ու ազատություններն են:

Հիմնական փաստաթղթերից մեկը, որ կարգավորում է մշակութային քաղաքականությունը, ՀՀ օրենքն է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»:[6]

Օրենքի Հոդված 24-ը անդրադառնում է համայնքի ղեկավարի լիազորություններին մշակույթի կառավարման ոլորտում: Ըստ այդմ, համայնքի ղեկավարը՝

1) ապահովում է համայնքի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացումը.

2) <u>որպես պարտադիր լիազորություն՝</u> կազմակերպում է համայնքի կողմից ստեղծված մշակութային կազմակերպությունների գործունեությունը, մշակութային օբյեկտների շահագործման և նորոգման աշխատանքները.

3) <u>որպես պատվիրակված լիազորություն՝</u> կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ.

4) <u>որպես կամավոր լիազորություն՝</u> աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.

5) <u>որպես կամավոր լիազորություն՝</u> աջակցում է ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

6) իրականացնում է մշակույթի ոլորտում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին»[7] ՀՀ օրենքը ավելի մանրամասն ու ըստ ոլորտների թվարկում է համայնքի պարտադիր խնդիրները, որոնց մեջ կարևոր տեղ է հատկացված նաև մշակութային խնդիրներին:

Օրենքի Հոդված 12-ում սահմանվում են համայնքի պարտադիր խնդիրները, որոնց մեջ, ի թիվս այլոց, մտնում են նաև՝ *1) համայնքի կայուն զարգացումը. 2) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը. 5) համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը. 15) համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը. 16) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների*

---

[4] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն - Գրադարան - Հայաստանի Հանրապետության Նախագահ (president.am)

[5] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն - Գրադարան - Հայաստանի Հանրապետության Նախագահ (president.am)

[6] Հայաստանի Հանրապետության օրենքը «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»// https://www.arlis.am/documentview.aspx?docID=69109

[7] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110583

կազմակերպումը. 20) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով»։[8]

Այս և մնացած պարտադիր խնդիրների իրագործումը ապահովում է համայնքի կայուն զարգացումը և նախադրյալներ ստեղծում/կարող է ստեղծել մարդկային ներուժի անընդհատ զարգացման համար։

Համայնքի ղեկավարի լիազորությունները, ըստ այս օրենքի, ածանցյալ են համայնքի պարտադիր խնդիրների շրջանակից։

Ըստ Օրենքի Հոդված 46-ի՝

1. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

«1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

2) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

3) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.

4) ստեղծում է պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար.

5) աջակցում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը. 1) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ»։[9]

Ըստ նշված կետերի ունենք Չարենցավան խոշորացված համայնքի կրթամշակութային քաղաքականության հետևյալ պատկերը.

---

[8] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110583

[9] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110583

1. *կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.*

Խոշորացված համայնքում գործում է 8/9 մանկապարտեզ՝ ՀՈԱԿ-ի կարգավիճակով, որից 5/6-ը՝ Չարենցավան քաղաքում, 1-ական՝ Բջնիում, Ալափարսում և Արզականում:

Ֆանտան և Կարենիս բնակավայրերում մանկապարտեզներ չեն գործում: Վարչական ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում մանկապարտեզի բացակայությունը դիտվում էր որպես կարևոր խնդիր, իսկ լուծումը որոշ ծնողների համար երեխաներին Չարենցավան տանելն է:

2) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

Համայնքում գործում է 11 հանրակրթական դպրոց, 6-ը՝ քաղաքում և 1-ական գյուղական բնակավայրերում:

Արվեստի դպրոցների թիվը երկուսն է՝ Չարենցավանում և Արզականում:

Գրադարանների թիվը երկուսն է՝ Չարենցավանում և Արզականում:

Երաժշտական դպրոցը, Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև մարզադպրոցը գործում են միայն Չարենցավան քաղաքում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գյուղական բնակավայրերում կրթամշակութային և մարզական հաստատությունների բացակայությունը փոխհատուցվում է մասամբ: Որոշ գյուղերում գործում են պարի խմբակներ, որոնց պարուսույցը ձևակերպված է ՀՈԱԿ-ում, որոշներում գործում են նաև մասնավոր մարզական ու այլ խմբակներ: Չնայած երեխաների մասնակի ներգրավվածությանը, համայնքային կյանքի ակտիվացման տեսանկյունից բոլոր գյուղական բնակավայրերում կարևոր է համարվում տեղում ինստիտուցիոնալ միավորներ ունենալը, մանավանդ որ Կարենիսում և Ալափարսում մշակույթի տները նման հնարավորություն (վերանորոգումից հետո) ընձեռում են:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը. 1) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ».[10]

[10] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110583

2022թ. նախատեսված միջոցառումների ցանկը ներառում է 25 միջոցառում, որոնք հիմնականում կազմակերպվում ու անցկացվում են քաղաքում: Որոշ միջոցառումներ, սակայն, վերջին տարիներին կազմակերպվում են նաև գյուղական բնակավայրերում, դառնալով համահամայնքային. Սուրբ Սարգսի տոնը /փետրվար 12/ կազմակերպվում է Բջնիի համանուն եկեղեցում; Տյառնընդառաջը 2021թ. կազմակերպվել է Ալափարսում, կազմակերպվում է Ֆանտանի ուխտագնացության օրը՝ հունիսի 19-ին, Արզական գյուղում օգոստոսի 14-ին կազմակերպվում է խաղողօրհնեք, սեպտեմբերի 24-ին Բջնիում կազմակերպվում է արիշտայի՝ ավանդական դարձած փառատոնը, սեպտեմբերի 25-ը ուխտագնացության օր է Կարենիս գյուղում: Այս միջոցառումները, որպես մշակութային քաղաքականության գործողություններ, նպատակ ունեն նպաստել խոշորացված համայնքի առանձին բնակավայրերի միջև ինտեգրացիայի կայացմանը, շփումների խորացմանը: Կարևոր է, որ կազմակերպվի նաև այս տեսանկյունից միջոցառումների արդյունավետության չափում և գնահատում:

Հոդված 52-ում շարադրված են նաև համայնքի ղեկավարի լիազորությունները զբոսաշրջության բնագավառում.

1. Համայնքի ղեկավարը զբոսաշրջության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

«1) գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.

2) ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին տեղեկատվություն է տրամադրում համայնքի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ.

3) զբոսաշրջության վարչական ռեգիստրի վարման նպատակով համապատասխան տեղեկատվություն է տրամադրում ռեգիստրը վարող պետական լիազոր մարմնին....

6) իր լիազորությունների շրջանակում ընդունված որոշումներով խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը».[11]

Ոչ միայն Չարենցավան խոշորացված համայնքի, այլ նաև Հայաստանի մնացած համայնքների համար կարևոր ու միաժամանակ դժվար լուծելի խնդիր է հատկապես զբոսաշրջային, տվյալ դեպքում՝ բնական ու պատմամշակութային ռեսուրսների քարտեզագրման խնդիրը:

[11] Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110583

Այս ոլորտում օրենսդրական կարգավորումները սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին»:[12]

Ըստ օրենքի Հոդված 6-ի, հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:

Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները:

Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները: Հուշարձանների դասակարգումը կատարում է հուշարձանների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հոդված 11-ը սահմանում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) սահմանված կարգով կազմում են բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը.

բ) աջակցում են պետական սեփականություն համարվող և չօգտագործվող հուշարձանների պահպանությանը.

գ) սահմանված կարգով կազմակերպում են տեղական նշանակության հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները.

դ) հանրապետական նշանակության հուշարձանների նկատմամբ իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորությունները.

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում են շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վտանգում են կամ կարող են վտանգել հուշարձանի ու դրա պահպանական գոտու անվթարությունը և այդ մասին տեղեկացնում լիազորված մարմնին.

զ) լիազորված մարմնի համաձայնությամբ օգտագործման կամ վարձակալության կարող են հանձնել համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերը և շինությունները.

---

[12] ՀՀ օրենքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին»: Ընդունված է Ազգային ժողովի կողմից 11 նոյեմբերի 1998թ.// https://www.arlis.am/documentview.aspx?docid=38019:

է) շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների կատարման ժամանակ հուշարձաններ հայտնաբերելիս կասեցնում են այդ աշխատանքներն ու այդ մասին անհապաղ հայտնում լիազորված մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

ը) ապահովում են համայնքի տարածքում գտնվող հուշարձանների պահպանական գոտիներում սահմանված հատուկ ռեժիմի պահանջների կատարումը.

թ) հուշարձանների պահպանական գոտիներում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմնին:

Տեղական ինքնակառավարման մարմինների անելիքները այս ոլորտում բավականին շատ են և պահանջում են մասնագիտական պատրաստվածություն ու ներուժ ունեցող աշխատակազմ, որը, սակայն, ոչ բոլոր համայնքներում է առկա: Չարենացավան խոշորացված համայնքում, համաձայն պետական լիազոր մարմնի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի»[13], առկա է մի քանի հարյուր հուշարձան (խաչքար, արձանագրություն, բնակատեղի, գերեզման, այլ), որոնց սոսկ քարտեղագրումը զբոսաշրջության զարգացման նպատակներին ծառայեցնելու նպատակով պահանջում է լուրջ մարդկային ներուժ և ռեսուրսներ:

Օրենքների պահանջներից բխող այս դրույթները դրվում են համայնքների ծրագրերի հիմքում՝ Տարեկան աշխատանքային պլաններ (ՏԱՊ), համայնքների զարգացման հնգամյա ծրագրեր:

Չարենցավան խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել և շրջանառության մեջ է դրվել համայնքի մաս կազմող առանձին բնակավայրերի՝ արդեն մշակված ծրագրերի վերանայման արդյունքում: Ֆանտան, Կարենիս, Արզական, Ալափարս և Բջնի գյուղական և Չարենցավան քաղաքային համայնքների զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրերը հաստատվել են 2016թ.:

2017 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ անելու մասին օրենքի համաձայն ձևավորվել է վեց բնակավայր ընդգրկող Չարենցավան համայնքը՝ Չարենցավան, Արզական, Ալափարս, Բջնի, Կարենիս և Ֆանտան:

Համայնքի ավագանու 2018թ. ապրիլի 5-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատվել է արդեն խոշորացված Չարենցավան համայնքի 2018-2022թ. զարգացման ծրագիրը: Եթե նախորդ ծրագրերը մշակույթն ու մշակութային քաղաքականությունը իրականացնում էին մեկ

[13] ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ (irtek.am)

միավորի շրջանակում, ապա նոր հնգամյա ծրագիրն ինտեգրված է, խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերի կարիքների հաշվառման ու լուծման նպատակադրմամբ:

Ծրագրում կարևոր տեղ է հատկացվում մշակույթին և մշակութային քաղաքականության իրագործմանը, որը և ձևավորել է քաղաքի մշակութային-զբոսաշրջային տեսլականը. *«Չարենցավան համայնքը կարող է վերածվել ստեղծագործական հանգույցի ի շնորհիվ պատմամշակութային ժառանգության վրա հիմնված զբոսաշրջության զարգացման: Չարենցավան համայնքում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Համայնքի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Չարենցավանի, Կարենիսի, Արզականի (Աղվերանի), Ալափարսի, Ֆանտանի և Բջնիի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և որոշակի ենթակառուցվածքներով: Չարենցավան քաղաքում գործում է «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն, որը ևս զբոսաշրջության համար հնարավորություն է:*

Համայնքի զբոսաշրջության զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր կարող են խաղալ Արզականի բազմաթիվ աղբյուրները: Ալափարսը հայտնի է նաև պատմական և ճարտարապետական կոթողներով, որոնցից առավել հատնի են «Մարիամ Աստվածածին», «Սուրբ Վարդան» և «Ծիրանավոր» եկեղեցիները, «Թուխ Մանուկ» մատուռը: Նշանակալի է Կարենիսի 5-րդ դարից եկող «Սուրբ Մարիամ Աստվածածին» միանավ բազիլիկ եկեղեցին: Բջնի գյուղում զբոսաշրջային հետաքրքրություն են ներկայացնում Բջնու ամրոցը /միջնադար/, Սուրբ Սարգիս /VII դար/, Սուրբ Գևորգ /VIII դար/, Սուրբ Աստվածածին /1031թ./ եկեղեցիները, բազմաթիվ խաչքարերը, հեթանոսական ժամանակաշրջանների արձանները, սառնորակ և քաղցրահամ աղբյուրները: Գյուղը հայտնի է իր «Բջնի» հանքային ջրով:

Զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևոր օժանդակող գործոն կարող է հանդիսանալ հուշանվերների արտադրությունը՝ համայնքում կան շնորհալի վարպետներ, որոնք կատարում են սակավաթիվ պատվերներ կամ իրացնում են իրենց արտադրանքը մայրաքաղաքում և հանրապետության սահմաններից դուրս»:

Ըստ այս ձևակերպման, առաջիկա տարիների համար խոշորացված համայնքը իրեն դիրքավորում է որպես պատմամշակութային զբոսաշրջության վրա հիմնված ստեղծագործական հանգույց-զբոսաշրջային կենտրոն:

Ծրագրում ձևակերպված են նաև զբոսաշրջության զարգացման ոլորտում հիմնական անելիքներն ու գործողությունները: Դրանք ներկայացնենք առանձին, միաժամանակ ներկայացնելով որոշ նկատառումներ, որ բխում են համայնքի մշակութային զարգացման ռազմավարությունից և այդ ռազմավարությունում ստեղծարար արդյունաբերության՝ որպես կարևորագույն բաղադրիչի դերի ընկալումից.

- Համայնքի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի բրենդի ձևավորում.

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղություններից մեկը կրոնական և պատմամշակութային զբոսաշրջությունն է:

Արդեն ձևավորված ենթակառուցվածքների, հաղորդակցության, զբոսաշրջային բիզնեսի կազմակերպման ավելի լայն հնարավորությունների և այլ իրողությունների արդյունքում կրոնական և պատմամշակութային զբոսաշրջության կայացած ուղղությունների և երթուղիների թիվն այսօր Հայաստանում բավականին մեծ է և այդ տեսանկյունից Չարենցավան խոշորացված համայնքին բավականին բարդ կլինի մրցակցել արդեն կայացած երթուղիների հետ: Մյուս կողմից, վերջին տարիներին ավելի է աճում հետաքրքրությունը խորհրդային ժառանգության, վերջինիս տարբեր՝ այդ թվում մոնումենտալ դրսևորումների հանդեպ: Այս սեգմենտը դեռևս բավարար չափով ձևավորված ու ակտիվ չէ: Չարենացավանը Հայաստանի այն սակավաթիվ, եթե ոչ եզակի համայնքներից է, որը գործողությունների ճիշտ պլանավորման դեպքում ունի հենց այս սեգմենտում ճիշտ դիրքավորվելու հնարավորություն, եթե հաշվի ենք առնում խորհրդային ահռելի ժառանգությունը և քաղաքի՝ որպես տիպիկ խորհրդային քաղաք կայանալու ողջ պատմությունը: Սրան գումարվում են նաև համայնքի մեջ մտնող բնակավայրերի համանման շինությունները (մշակույթի տներ, ակումբներ, այլ մոնումենտալ շինություններ):

Ըստ այդմ, համայնքի՝ որպես զբոսաշրջային բրենդի ձևավորումը պետք է լինի բազմաբաղադրիչ, վերագնահատվի որպես ինտեգրված, որում պատմամշակութային ու կրոնական բաղադրիչներին պետք է ավելացվի խորհրդային մշակութային ժառանգությունն ու այն զբոսաշրջային առաջարկում ճիշտ ներկայացնելը: Այս մոտեցումը հնարավորություն կտա Չարենցավա խոշորացված համայնք բրենդի մեջ առանձնացնել նաև առանձին բրենդներ:

- **Պատմամշակութային հուշարձանների, զբոսաշրջությանը սպասարկող ենթակառուցվածքների գույքագրում և քարտեզագրում:**

Պատմամշակութային հուշարձանների հիմնական մասը ներառված է «Հուշարձանների պետական ցուցակ»-ում և ըստ այդմ, լավագույն դեպքում պետք է ձևակերպել որոշ նորահայտ հուշարձաններ ցանկերում ներառելու խնդիրը: Այս գործողության մեջ կարևոր է, որ գործընթացները կազմակերպվեն զբոսաշրջային բրենդինգի տրամաբանության շրջանակներում և ցանկերում ներառվեն նաև խորհրդային ժառանգության հուշարձաններ, որոնցից որոշները, ըստ հետազոտության արդյունքների, մինչ օրս պահպանվել են նաև մասնավորեցված ձեռնարկությունների տարածքներում:

- **Տեղեկատվական ցուցանակների տեղադրում.**

Հետազոտությամբ բացահայտվեց, որ ոչ միայն Չարենցավան քաղաքում, այլ գյուղական բնակավայրերում այսօր բավարար չափով պահպանված չէ խորհրդային մշակութային ժառանգության մասին տեղեկատվությունը: Խնդիրներ են առաջանում նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը հայտնի հուշարձանների մասին է, որոնց պատմությունը կապվում է հայ մշակույթի, ճարտարապետության հայտնի դեմքերի հետ (Հենրիկ Սիրավյան, Տիրան Մարության, Ռաֆայել Իսրայելյան և ուրիշներ): Դրանք գյուղական

ակումբներ են, մշակույթի տներ, վերջինների պատերին արված որմնանկարներ (ինչպես օրինակ Հ. Սիրավյանի արած որմնանկարը Բջնիի մշակույթի տանը կամ Ալափարսի մշակույթի տանը պահպանված որմնանկարը)։ Տեղեկատվական ցուցանակները պետք է ունենան նաև խորհրդային մշակութային ժառանգությունը հանրայնացնելու նպատակ և պետք է վերաբերեն առանձին արդյունաբերական ձեռնարկությունների, առանձին անձանց-անհատների, առանձին հուշարձանների, ծառայելով բազմաբաղադրիչ զբոսաշրջության բրենդինգին։ Մշակութային զարգացման ռազմավարության համատեքստում կարևոր կարող է լինել նաև փողոցների անվանակոչումը և քաղաքում և գյուղական բնակավայրերում և նաև այս ճանապարհով Չարենցավանի խորհրդային շրջանի պատմության վերականգնումը։ Այս մոտեցումը կարևոր է **ստեղծարար արդյունաբերության** զարգացման համատեքստում, քանի որ թույլ կտա բրենդավորել նաև չարենցավանյան ստեղծարար արդյունաբերությունը՝ հուշանվերների արտադրությունից մինչև գեղարվեստական ստեղծագործություններ։

- **Զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի ստեղծում.**

Տեղեկատվական կենտրոնը մասնաճյուղեր պետք է ունենա համայնքի բոլոր բնակավայրերում, իսկ տեղեկատվությունը պետք է լինի համալիր՝ պատմաճարտարապետական հուշարձաններ, խորհրդային շրջանի պատմություն և միաժամանակ կոնկրետ բնակավայրի առաջարկ։

- **Հատկապես գյուղական բնակավայրերում հյուրընկալող ընտանիքների ներուժի բացահայտում, կարողությունների բարելավում.**

Հյուրընկալող ընտանիքների ներուժի բացահայտումը պետք է դիտվի որպես ածանցյալ գործողություն։ Որպես մշակութային քաղաքականության արդյունավետության և ստեղծարար արդյունաբերության զարգացման առաջնային նպատակ պետք է դիտարկվի առանձին բնակավայրերի ներուժի բացահայտումը և ճիշտ դիրքավորումը «Չարենցավան» զբոսաշրջային բրենդի քարտեզի վրա։ Ըստ հետազոտության արդյունքների, Բջնին, օրինակ, կարող է դիրքավորվել որպես արհեստների ու արվեստների լոկալ կենտրոն, Ալափարսը՝ որպես կրոնական զբոսաշրջության կենտրոն, հատկապես որ այստեղ բացառիկ է Վարդան Մամիկոնյանի շուրջ ձևավորված նարրատիվը, Կարենիսը կարող է դիրքավորվել որպես արկածային զբոսաշրջության կենտրոն, Ֆանտանը, հատկապես վերջին տարիների զարգացումներով պայմանավորված, ունի որպես կրոնական և արկածային զբոսաշրջության կենտրոն դիրքավորվելու ներուժ, սակայն կարևոր է, որ օգտագործվեն նաև գյուղի՝ որպես ձեթի արտադրության կենտրոնի մասին ձևավորված նարրատիվներն ու պրակտիկաները։ Արզականը, արվեստի կենտրոնի առկայությամբ պայմանավորված, պետք է բրենդավորվի որպես մշակույթի կենտրոն, միաժամանակ քարտեզագրելով ու բազմազանեցնելով որպես ընտանեկան հանգստի կենտրոն։

- **Ագրոտուրիզմի և գաստրոնոմիկ տուրիզմի զարգացում՝ օգտագործելով հատկապես տեղական ավանդույթները պահպանող գյուղական բնակավայրերում առկա ներուժը.** Այս ոլորտի զարգացումը նույնպես պետք է կազմակերպվի՝ լոկալ առանձնահատկությունների հաշվառմամբ: Այս մոտեցումը կարևոր է, քանի որ Հայաստանում ներկայումս այս ուղղությունները բավականին դինամիկ զարգանում են, սակայն առկա է առաջարկի բազմազանեցման, ըստ համայնքների կոնկրետ ուղղությունների, ճաշատեսակների, տեղական մշակութային առանձնահատկությունների հաշվառմամբ ճաշացանկերի ձևավորման ու ներկայացման խնդիրները:

Չարենցավան քաղաքի մշակութային զարգացման ներուժի առցանց հետազոտություն հետազոության արդյունքների ամփոփում

#EU4Culture ծրագրի շրջանակներում Չարենցավան խոշորացված համայնքի մշակութային զարգացման ռազմավարություն կազմելու համար "Մշակույթը հանուն կայուն զարգացման" կազմակերպությունը անցկացրել է առցանց հետազոտություն: Քաղաքում տեղում անցկացվող ուսումնասիրությանը զուգահեռ թվանշանային գործիքով սոցիալական ցանցերի օգնությամբ անցկացված այս հետազության միջոցով փորձել ենք պարզել մշակութային կյանքին խնդիրները, ստեղծածար մշակույթի ոլորտի մասին ընկալումները, ու մշակութահեն զարգացման կարողությունները (հարցաշարը՝ հավելված 1): Հարցաշարը կազմել են ՄՀԿԶ հկ-ի փորձագետները, և այն տեղադրվել է "Մշակույթը հանուն կայուն զարգացման" կազմակերպության պաշտոնական էջում 2022 ապրիլի 5ին (տես հարցաշարը՝ t.ly/bWbp, տես facebook սոցիալական կայքում գրառումը https://www.facebook.com/CULTforDEV/posts/1014461812533860):
Չարենցավան համայնքում թիրախային գովազդի գործիքի կիրառմամբ հարցաշարը տարածվել է 29 անգամ, դրա մասին տեղեկություն տեսել է 10000 մարդ, որից 2750 ծանոթացել է տարածված գրառմանը, իսկ 1425 մարդ տեսել է հարցաշարի բովանդակությանը և հետազոտության նպատակը: Ապրիլ-մայիսի 5 ժամանակահատվածում Չարենցավան համայնքում ստեղծագործական արդյունաբերության և մշակութային ռազմավարության ներուժի բացահայտմանն ուղղված առցանց հետազոտությանը մասնակցել են 106 քաղաքացիներ: Հարցման մասնակիցների 80%ը ծնվել և բնակվում է Չարենցավանում, իսկ 25%ը այլ բնակավայրերից է տեղափոխվել և բնակվում է Չարենցավանում, նկար 1:



Չարենցավանում բնակվելու տարեթիվը միջինում կազմում է 17, իսկ առավելագույնը 35-50+ տարի բնակվել են Չարենցավանում:

Գենդերային պատկերը

Կանանց մասնակցությունը հարցմանը կազմել է 84, իսկ տղամարդկանցը 16%, նկար 2: 25% մասնակիցների տեղափոխվել է Չարենցավան այլ բնակավայրերից ամուսնության, աշխատանքի, Առաջին արցախյան և 2020ին պատերազմի պատճառով Արցախից բռնագաղթի պատճառով: Կանանց գերակշիռ մեծամասնությունը տեղափոխվել և սկսել է բնակվել քաղաքում ամուսնության պատճառով:



Մասնագիտական զբաղմունքը



Մասնակիցների խմբերի խոշոր խմբերից 29% պետական հիմնարկների աշխատակիցներ են, 19 % ուսանող են, 12 % նշել է իրեն որպես գործազուրկ, 10 % ինքնազբաղված է՝ ունեն սեփական բիզնեսը: 11 % ն աշխատում է մասնավոր կազմակերպություններում: Միայն 6 % տնային ինքնազբաղվածությունը նշել որպես իր հիմնական զբաղմունք:

Քաղաքային ինքնություններ և ընկալումներ

Պատմական

Քաղաքի պայմանական ընկալում ըստ ստացված նյութերի հիմնականում, որպես այդպիսին հիմնականում չկա, Խորհրդային շրջանը չի ընկալվում կամ ամփոփվում որպես անցյալ: Հազվադեպ նշվում է, որ սա «Սովետական քաղաք, որը դեռ չի նույնականացվել իր անվան հետ» կամ որ «հին» քաղաք է:

Տնտեսական

Չարենցավանի տնտեսական կերպարի ընկալումը տարիքային խմբերի մոտ տատանվում է, պայմանավորված քաղաքային կյանքի մասին վերջիններիս փորձությունների երկարատևությունից և հիշողությունների: Հետազոտության մասնակիցները նշում են քաղաքի տնտեսական երկու հակադիր կերպարներ՝ 1. որպես «Հին արդյունաբերական հզոր քաղաք» կամ «Երիտասարդ արդյունաբերական հսկա քաղաք»: Այս դեպքում քաղաքի արդյունաբերական, գործարանային ներուժը գնահատվում է որպես զարգացման հեռանկարի ներուժ: 2. Հետխորհրդային քաղաք, որը անկումային է, կորցրել տնտեսական կարողությունները, իսկ արդյունաբերական ժառանգությունը և հնարավորությունները խզված են քաղաքային տեսլականից կամ չեն նպաստում հեռահար զարգացմանը: Այս

տեսանկյունով քաղաքը բնութագրվում է որպես «զարգանալու մեծ հեռանկար ունեցող, բայց դրա համար ոչինչ չանող», «մեռնող քաղաք»:
Երկու դեպքում էլ քաղաքի տնտեսական կերպարը նույնականացված է արդյունաբերական կարողությունների և ներուժի հետ: Քաղաքի տնտեսական կենսագործունեությամ մասին պատկերացումը հիմնականում ոչ մասնակցային է, այսինքն կա Խորհրդային շրջանի կենտրոնաձիգ տնտեսավարման ակնկալիք հարցմանը մասնակցած քաղաքացիների մոտ: Ստացված պատասխաններում մշակութային կամ ստեղծագործական աշխատանքը որպես քաղաքային տնտեսության բաղկացուցիչ կամ զարգացման հնարավորություն չի ընկալվել և չի նշվել:

Առօրեական

Փոքր քաղաքների բնակիչների հանրային կամ սոցիալական ակտիվությունը մեծապես փոխկապակցված է և պայմանավորված է քաղաքի տնտեսական բնույթով: Այսպիսի կապը առավել սուր և սերտ է հատկապես արդյունաբերական և հետարդյունաբերական փոքր քաղաքների դեպքում: Արդյունաբերական քաղաքների բնակիչների սոցիալական, մշակութային, ժամանցի և տնտեսական առօրեականությունը բխում է արդյունաբերական ձեռնարկությունների ակտիվության և սոցիալական քաղաքականության ֆորմալ, ոչ ֆորմալ նախաձեռնություններից: Չարենցավան համայնքը, հետխորհրդային ժամանակաշրջանում հայտնվել նախկին ԽՍՀՄ հետարդյունաբերական քաղաքներին բնորոշ սոցիալ-մշակութային ճգնաժամի մեջ, քանի որ դադարել կամ նվազել է նախկին արդյունաբերական տնտեսական հզորությունը, քաղաքացիների սոցիալական տնտեսական կենսամակարդակը:
Այս իրավիճակում փոփոխվել են քաղաքի հանրային, ընտանեկան, մասնավոր կյանքի ակտիվությունները, և քաղաքի ընկալումն ընդհանուր առմամբ:
Քաղաքի առօրեականության վերաբերյալ ընկալումները բաժանվում են երեք խմբերի:

1ինը՝ *խաղաղ և հանգիստ* քաղաք: Այս դեպքում նկարագրվում է քաղաքը որպես բարենպաստ միջավայր բնակության համար: Համարվում է որ այն հարմարավետ է, գեղեցիկ է, ֆոնային արհեստական աղմուկներից զերծ է (մեքենաների ձայն, գործարանների ձայն են): Այս կարծիքը առավել հաճախ է նշվել կրթական, ստեղծագործական ոլորտի ներկայացուցիչ կանանց պատասխաններում:

2րդ դեպքում քաղաքային առօրյան բնութագրվում է տխուր, միապաղաղ, քնած կամ սառը, կեղտոտ: Այս ընկալումը գերիշխում է տարբեր տարիքային խմբերի մոտ, անկախ մասնագիտությունից և գենդերային ինքնություններից: Քաղաքային շարժունակության և ակտիվության մեկ այլ գործոն՝ հանրային տրանսպորտի սպասելու դադարը ևս ավելացնում է քաղաքային կյանքի ակտիվության «դադարի» զգացողությունը:

Քաղաքային առօրեականությամ մեջ ոչ հանրային, ոչ մասնավոր ժամանցի ձևերը որպես քաղաքին առանձնահատուկ երևույթներ չեն դիտարկվում: Այսինքն քաղաքը ապաժամանցային է: Այս համատեքստում քաղաքի բնութագրում չի նշվում նաև

ստեղծագործական արդյունաբերությունը որպես քաղաքային կամ մասնավոր ժամանց, չնայած որպես ինքնազբաղվածության տեսակներ դրանք գոյություն ունեն:

Ըստ հետազոտության արդյունքների, «Ի՞նչ եք կարծում, համայնքային մշակութային, սոցիալական կյանքն ակտի՞վ է» հարցին քաղաքացիները 48 % պատասխանել է՝ ոչ, 46 % այն համարել է «երբեմն ակտիվ», և միայն 3 % է նշել, որ «այո, ակտիվ է»:



«Ի՞նչ հաճախականությամբ եք մասնակցում մշակութային միջոցառումներին Ձեր համայնքում» հարցին պատասխանների 33 % նշել են, որ երբեմն մասնակցում են, 26 % հազվադեպ է մասնակցում, իսկ 21 % «չի մասնակցում» միջոցառումների: 15% նշել է, որ մասնակցում է, 7% կարծում է, որ համայնքային միջոցառումներ չեն լինում, այդ պատճառով չեն այցելում:



Բնապատկերային ընկալումներ

Տնտեսական և սոցիալական, մշակութային հակադիր ընկալումներին և նկարագրություններին զուգահեռ բնակիչները Չարենցավան համայնքի մրցունակ առավելությունն են համարում բնական լանշաֆթը և բնակլիմայական առանձնակատկությունը, շրջակա միջավայրը: Եթե քաղաքային միջավայրը նկարագրվում էր որպես կեղտոտ, անխնամ, սառը կամ միապաղաղ, հանգիստ, ապա էկոլոգիական տեսանկյունից քաղաքը բնութագրվում է որպես մաքուր և կանաչ: Իսկ քաղաքի գունային ընկալումներն են կանաչը և կապույտը՝ բնությունը և երկինքը: Այսինքն, արդյունաբերական ժառանգությանը զուգահեռ այժմ կանաչ քաղաք կոնցեպտի զարգացումը ևս կարող է դիտարկվել որպես ստեղծարար գործունեությունը խթանող:

Սոցիալական

Չարենցավանի սոցիալական կերպարի բնութագիրը բաժանվում է 3 խմբի:

Առաջինի դեպքում քաղաքը բնութագրվում է որպես երիտասարդ և երիտասարդական, ստեղծագործական ներուժով և շնորհքով մարդկանց միջավայր, որն ունի զարգացման համար անհրաժեշտ մարդկային ներուժը: Այս տեսակետը գերակշռում է միջին և ցածր տարիքի կանանց պատասխաններում: Երկրորդ տարբերակում, որտեղ քաղաքի հանրային կյանքը բնութագրվում է որպես ոչ դինամիկ, ինքնադրսևորման հնարավորություններից զուրկ գործազրկության միջավայր, նշվում է նաև որ քաղաքից ստեղծագործական ներուժը աստիճանաբար արտագաղթում է. «Երիտասարդ շատ լավ քաղաք է, բայց ոչինչ չունենալու պատճառով դատարկվել է, ծերանում է քաղաքը»: Ծերացող քաղաքը կենսունակ դարձնելու համար որպես առաջնային կարիքներ նշվում են ստեղծագործական ժամանցի միջավայրերի ձևավորման. «Խաղաղ քաղաք՝ ցավոք առանց լավ ժամանակ անցկացնելու հնարավորության», օրինականության և օրինապահության վերականգնման անհրաժեշտությունները: Ենթադրվում է, որ այս հանրային այս կարիքները ուշադրության կենտրոնում պահելու և կարգավորելու դեպքում քաղաքային երիտասարդությունը չի արտագաղթի. «Զանձրալի…. Քաղաքը չի ապրում, այն քնած է: Ջահելներին մնալու տեղ չէ, ժամանց չկա»: Արդյունքում բնակիչներից շատերն ակնկալում են քաղաքի ընդհանուր կենսամակարդակի բարձրացում. «Մեծ պոտենցիալով, բայց ցածր կենսամակարդակով քաղաք»:

Մշակությաին

Մշակույթը որպես քաղաքային ներկայիս առօրեականության կամ քաղաքի ներկա կերպարի մաս չի դիտարկվում և չի նշվել: Այդ ընկալումը հիմնականում դա պայմանավորված է քաղաքի մշակութային քաղաքականությամբ, որի փոփոխությունը կամ նորացումը հնարավոր կդարձնի վերաիմաստավորել քաղաքի մշակութային կյանքը և ստեղծարար մշակույթի զարգացման հնարավորությունները: Օրինակ մշակութային նոր հայեցակարգի և քայլերի ներդրման անհրաժեշտության մասին է խոսում այն, որ «Գո՞հ եք քաղաքում առկա

ստեղծագործական միջավայրերի հնարավորություններից» 87 % մասնակիցների նշել է «կցանկանայի բարեփոխել և ավելացնել», և միայն 8 % է ընտրել «այո», գոհ տարբերակները։



Որպես մշակութային միջավայրեր ընկալվում պետական գեղագիտական և կրթական հաստատությունները ըստ առավել հաճախ նշված հերթականության՝ երաժշտական դպրոցը, գրադարանը, պարային համույթ, սրճարան և արվեստի կենտրոններ։



Հաճելի վայրեր

Քաղաքի հաճելի վայրերի վերաբերյալ հարցին պատասխանները կիսվում են երկու գրեթե հավասար խմբի, ըստ որոնց առաջինում նշվում է, որ քաղաքում հաճելի տարածքներ չկան (20-40 տարեկանների պատասխաններում), իսկ մյուս խումբը գտնում է, որ քաղաքն ունեցել կամ ունի հաճելի միջավայրեր, որոնք հիմնականում մշակութային տարածքներն են։
Քաղաքային հաճելի տարածքները հիմնականում կապված են խորհրդային կամ ներկայումս գործող ստեղծագործական հանրային միջավայրերի հետ, կամ դրանց հարևանությամբ են։
Առաջնային դրական վայրեր են համարվում

1. Քաղաքային զբոսայգին. «Կարծում եմ այգին վերանորոգվելուց հետո պոտենցիալ ունի երեխաների լավ ժամանակը ապահովել»։
2. Եկեղեցին և դրա բակը
3. Եղևնիներով փողոցը
4. Կենտրոնական հրապարակը
5. Երաժշտական դպրոցը

6. Հրապարակը

Նախկինում գործողներից՝

1. Կինոթատրոն
2. Լողավազաններ. «Հրաշալի կլինի, եթե լինի նորմալ լողավազան: Իմ երեխաները ստիպված գնում են Հրազդան լողի»
3. Զբոսայգին ամբողջական ծավալով
4. Կայարանը

Ճարտարապետական կառույցներ և հուշարձաններից

1. Կինոթատրոն
2. Մարզադաշտը
3. Երաժշտական և արվեստի դպրոցները
4. Կայարանը «հրապարակի զարդն է նույն պես լքված շինություն է դարձել»

Տեսարժան վայրեր և հուշարձաններ

Գանգրահեր տղայի արձան-համալիրը, ապա Չարենցի արձանը նշվել է որպես քաղաքի ամենահայտնի, ճանաչելի և տեսարժան հուշարձանը, տարածքը: Քաղաքային ինքնության ճանաչելի նշանն է արդեն: Ճարտարապետական և մշակութային միջավայրերից առաջնահերթությունը տրվել է երաժշտական դպրոցի շենքին, ապա կայարանի շենքը և քաղաքապետարանի շենքը:

Այս համատեքստից դուրս են մնում խորհրդային շրջանի արդյունաբերական ժառանգության միջավայրերը:

Քաղաքային զբաղմունքները

Ձմեռ

Ձմեռային ժամանակահատվածը Չարենցավանում երկարատև է, ձյունառատ: Քաղաքային կյանքի ձմռանը համարվում է ամենապասիվը: Միաժամանակ ձյունառատ ձմեռները համարվում են քաղաքի հանրային ակտիվությունը բարձրացնելու և ստեղծագործական հանրային միջոցառումները խթանելու հարուստ ներուժ:

Ձմեռային ակտիվության ամենահաճախ նշված առաջարկն է բակային և միջթաղային ոչ ֆորմալ և ֆորմալ խաղերը՝ ձնագնդի, ձնեմարդ պատրաստելու ֆլեշմոբերը, որոնք կարողն են դառնալ փառատոններ:

Ձմեռային սպորտաձևերի կազմակերպում, մասնավորապես նշվում է, որ սահադաշտ ունենալու դեպքում քաղաքի ձմեռային ժամանցը կարող է աշխուժանալ:

Ռիսկեր են համարվում փողոցները սառցապատվածությունից չմաքրելը, երեկոյան ժամերին թափառող շների հարձակումները:

Ձմեռը նաև համարվում է փակ տարածքներում ստեղծարար զբաղվածությունը խթանող հնարավորություն՝ թատերական կամերային ներկայացումներ, ընթերցանություն կամ ձեռքի աշխատանքների ստեղծագործում, փորձի փոխանակում, կինոդիտումներ: Սակայն նշվում է, որ քաղաքը չունի անհրաժեշտ ոչ ֆորմալ համակարգեր այդ կարիքը սպասարկելու համար

Ամառ

Այս եղանակի համար հիմնական ակտիվությունները շատ մասնավոր են դժվար ընդհանրացնող: Առավել տարածված զբաղմունքը, որը խորհուրդ է տրվում ամռան ժամանակ՝ զբոսանքն է քաղաքում. «Ինձ համար զբոսնելն է հաճելի, առանձնակի վայրեր չկան, հաճելի զբաղմունք ունենալու համար»: Հաջորդ տարածվածը զբոսանք քաղաքից դուրս բնություն և պիկնիկ, այցելություն հարակից գյուղերի պատմամշակութային հուշարձաններ, ագրո և էկո տուրիզմը: Հիմնական պահանջարկներից է բացօթյա սպորտաձևերի համար անհրաժեշտ հանրային տարածքների ստեղծումը, լողավազանի կառուցումը:
Նշվում է, որ քաղաքային միջավայրում ամռան շոգերին ստեղծագործական միջավայր և զբաղմունք է Գամմա սրճարան գնալը, որը նաև նշվում է որպես մշակութային կենտրոն: Սրան այլընտրանք մշակությաին կամ ստեղծագործական հանրային ակտիվության տարածքներ և միջոցառումներ չեն նշվում, քանի որ չկան. «քանի որ քաղաքը չունի ժամանցային վայրեր բոլորը ձգտում են միայն քաղաքից դուրս գնալ»:

Աշուն

«Հետաքրքիր և հաճելի ինչո՞վ կարելի է զբաղվել աշնանը Չարենցավան համայնքում» հարցին տրված պատասխաններից ամենահաճախը նշվում է, որ աշնանը քաղաքը յուրահատուկ բնական միջավայր է ունի, որի շնորհիվ լավագույն զբաղմունքը դառնում է քաղաքի այգային և ծառաշատ հատվածներում լուսանկարչական սեսիաներ անցկացնելը կամ լուսանկարելը: ստեղծարար արդյունաբերության այս ճյուղը համարվում է ամենախրախուսելին աշնան տերևափաթերի ժամանակ հատկապես: Այս շրջանում առաջարկվումէ կազմակերպել լուսանկարչության վարպետաց դասեր, նկարչական և լուսանկարչական ցուցահանդեսներ, փառատոններ, երիտասարդական «ոսկե աշուն» ստեղծագործական փառատոն. «Կազմակերպել ցուցահանդեսներ, ի ցույց դնել համայնքի տաղանդավոր բնակիչների աշխատանքները, տոնավաճառներ կազմակերպել»

Գարուն

«Հետաքրքիր և հաճելի ինչո՞վ կարելի է զբաղվել գարնանը Չարենցավան համայնքում» հարցին հիմնական պատասխանները երկու խմբի են՝ որևէ անելիք չկա, բացի առօրյա անելիքները, քաղաքը գարնան ժամանակահատվածում հանրային ակտիվության առաջարկներ չունի, բացի ծառատունկը, շաբաթօրյակը: որպես ստեղծագործական

ակտիվություն առաջարկվում է քաղաքային դասական համերգներ կամ երաժշտական միջոցառումներ կազմակերպել:

Ստեղծարար գործունեության կարիքներ և առաջարկներ

«Ի՞նչ ծրագրեր կամ միջոցառումներ կառաջարկեիք, կամ կցանկանայիք մասնակցել՝ Չարենցավան խոշորացված համայնքի մշակույթի ոլորտում իրականացնելու համար» հարցի դեպքում նշվում է մի քանի ակտիվության ձևեր՝

1. Հանրային՝ համայնքապետարանի կողմից կազմակերպված տոներ, պարային, երաժշտական փառատոններ
2. Թատրոն, կինոդիտում
3. Կրթական՝ Թումո, ստեղծարար արվեստի ուղղությունների դասընթացներ,
4. տեղի ստեղծագործողների ներուժը ցուցադրող և կարողությունները խթանող ցուցահանդեսներ, դասընթացներ

Երիտասարդների, երիտասարդ ընտանիքների դեպքում Չարենցավան քաղաքից Երևան մեկնելու պատճառներից առաջնայիններին են կրթականը և ժամանցայինը: Մասնավորապես նրանք Երևանում այցելում են կինո, թատրոն, ստեղծարար արվեստի դպրոցներ, համերգներ («Դասական երաժշտության համերգներ, օպերաներ, արտերկրից հրավիրված տարբեր երաժիշտների համերգներ, ինչպես նաև թատերական ներկայացումներ՝ միայն Երևանում, միայն այնտեղ են կենտրոնացված նմանատիպ մեծ միջոցառումները: Մարզերը, ցավոք, շարունակում են լինել անտեսված, հատկապես մշակույթի ոլորտում»), թանգարաններ («Երևան՝ թատրոն, կինո, թանգարան, գրադարան, սրճարաններ, ժամանցային կենտրոններ (Քվեսթ խաղեր, պարելու վայրեր, զբոսայգիներ): Հարևան քաղաքներ (գյուղեր)՝ տեսարժան վայրեր, կոթողներ, ուղակի այցելություն տարբեր քաղաքներ»):

Չարենցավանի մշակութային արդյունաբերական ժառանգության քարտեզագրում, վերլուծություն

Խորհրդային շրջանում Չարենցավանում գործել է 16 արդյունաբերական ձեռնարկություն՝ ձուլարան, մետաղամշակման, հաստոցաշինական, գործիքաշինական, երկաթբետոնե կոնստրուկցիաների և ավտոբեռնիչների գործարաններ, քիմիական և տեքստիլ արտադրություններ, որտեղ միայն ինժեներական աշխատակազմը անցնում էր 1000-ից: Բոլոր գործարանները հովանավորել են քաղաքի տարբեր մշակութային օջախներին: Այսպես՝ Երաժշտական դպրոցի բացառիկ երգեհոնը Հաստոցաշինական գործարանի նվերն է:

Մեր հետազոտության նպատակներից մեկն այս գործարանների մշակութային դերի և դրանց տարածքները որպես արդյունաբերական ժառանգության տարածքներ դիտարկելու հնարավորությունների քննարկումն է: Հետազոտությունը ցույց տվեց, որ քաղաքի/համայնքի ներկայացման, դիրքավորման, պաշտոնական տեքստերում քաղաքի ինքնության հստակությունը թույլ է:

Այսպես, «Համայնքի անձնագրում», քաղաքի ու գյուղական բնակավայրերի նկարագրական տեքստերում, այլ փաստաթղթերում, ինչպես արդեն տեսանք, հիմնականում ներկայացված են աշխարհագրական և պատմական վաղ շրջանների տվյալներ, ինչպես նաև անորոշ, ոչ այնքան հստակ ձևակերպումներ համայնքների բնակչության զբաղմունքների մասին: օր՝ Չարենցավան համայնքի անձագիր Նշված չէ (charentsavan.am)

Համայնքի/քաղաքի պատմության ներկայացումը քաղաքում. տոպոնիմներ, տոներ ևն

Չարենցավան քաղաքի հիմնական լանդշաֆթը (մշակութային, տեղանվանական) չի արտացոլում քաղաքի երբեմնի արդյունաբերական ժառանգության և հիմնադրման պատմությունը: Քաղաքի անվանումը՝ Չարենցավան դրսևորվում է նաև այլ սիմվոլներով՝ քաղաքային զբոսայգում Արա Շիրազի քանդակած Եղիշե Չարենցի թուջե արձանը, հրապարակում՝ ներկայիս արվեստի դպրոցի դիմաց Էդիկ Ծուղունյանի հեղինակած՝ Եղիշե Չարենցի արձանը, Չարենցի փողոցը, Չարենցի հուշասրահը, Չարենց մարկետը:

Արդյունաբերական ժառանգության հետ կապված քաղաքում եղել է Գործարանային փողոց, որն առանձնացրել է քաղաքի բնակելի և արտադրական մասերը: Գործարանային փողոցը անվանվել է Կենտրոնաձուլ գործարանի նախկին տնօրեն Սանասար Մելտոնյանի անվան: Չարենցավան քաղաքում փողոցները անվանակոչված են, հիմնականում հայ գրողների անունով: Հետխորհրդային շրջանում մեկ դպրոց անվանակոչվել է Ստեփան Ավանյանի անվան, ինչպես նաև քաղաքում տեղադրվելէ Գ Ռուսով / Լուսավանի գործիքաշինական և Կենտրոնաձույլ գործարանների հիմնադիրն ու տնօրենը/ կիսանդրին և նրա անունով վերանվանվել է փողոց:

Միաժամանակ, քաղաքում հետարդյունաբերական ժամանակներում քաղաքի ստեղծման և կայացման պատմության հետ կապված դերակատարների կապը հիշողության քաղաքականության համատեքստում թուլացել է, պահպանվում է բանավոր հիշողությունը, երիտասարդները արդեն կտրվել են քաղաքի պատմության, կայացման պատումների և դրանց մեջ առանցքային դերակատարում ունեցած մարդկանց մասին տեղեկատվությունից: Այս պատճառով առաջարկում ենք վերանայել քաղաքային լանդշաֆթի տեղանունների անվանակոչության մոտեցումները՝ ապահովելով քաղաքային պատմության արտացոլումը այս տեղանունների մեջ:

Մասնավորապես.

Լուսավան/Չարենցավանի նախագծի և հատակագծի հեղինակը հեղինակը հայտնի ճարտարապետ Տիրան Մարությանն[14] է: Գյումուշ ՀԷԿ-ի բանավանի Լուսավան անունը ևս նրա առաջարկն է, որը հետագայում մինչև 1967 թ կոչվել է Լուսավան: Տիրան Մարությանը Չարենցավանի (Լուսավանի) գլխավոր հատակագծի հեղինակն է /1947 թ./, քաղաքում 1947թ. կառուցված հիվանդանոցի, մսուր մանկապարտեզի շենքերի ճարտարապետը, 1949 թ ակումբի շենքի ճարտարապետը: Այս կառույցները միգուցե այլ, արդեն ձևավորված քաղաքների կառուցապատման դեպքում առանցքային կարևորության չլինեին: Սակայն Չարենցավանում, որը զրո կետից կառուցված նոր քաղաք էր, այս կառույցների առաջացումը նշանակում էր նաև քաղաքային կյանքի ու քաղաքի ապագայի կազմակերպում և դրանով Տիրան Մարությանի դերակատարությունը առանցքային է Չարենցավանի քաղաքային պատմության մեջ:

Չարենցավանը հաջորդ կտրուկ զարգացումը տեղի է ունեցել Չարենցավանի 1972-1987թթ քաղխորհրդի գործկոմի նախագահ Վլադիմիր Ավետիսյանի օրոք, ում չարենցավանցիները հիշում են բացառիկ ջերմությամբ և շնորհակալությամբ՝ որպես քաղաքի սրտացավ կառավարիչ և զարգացման առաջնորդ: Նրա կառավարման տարիներին ձևավորվել է քաղաքի մշակութային լանդշաֆթը՝ Չարենցի հուշասրահը, Գանգրահետ տղայի արձանը, երաժշտական դպրոցը և այլն:

Տիրան Մարությանի և Վլադիմիր Ավետիսյանի չարենցավանյան ներդրումները լրացուցիչ ուսումնասիրության և հանրայնացման կարիք ունեն, ինչը կարող է նաև քաղաքի ստեղծարար արդյունաբերության համար նոր գաղափարների ու նախաձեռնությունների հենք դառնալ, ինչպես նաև նպաստել քաղաքի պատմության մասին միջսերնդային գիտելիքի փոխանցմանը և ինդուստրիալ ժառանգության (վերա)ներկայացմանը:

Քանդակագործ Խաչիկ Միրիջանյանի, հաստոցաշինական գործարանի տնօրեն Գրիգոր Երիցյանի և այլոց անունները ևս կարող են տեղ գտնել քաղաքի լանդշաֆթում՝ տարբեր դրսևորումներով:

Քաղաքի տեղանուններում քաղաքի արդյունաբերական անցյալի արտացոլման համար համայնքը կարիք կունենա իրականացնել լրացուցիչ հարցումներ, հետազոտություններ՝ քաղաքի բնակիչների կարծիքները գրանցելու, մարդկանց հիշողությունները ի գիտություն ընդունելու և մասնակցայնություն ապահովելու համար:

Քաղաքի հիմնադրում.

Աշխարհում միգուցե շատ չեն քաղաքները, որոնք կիմանան հիմնադրամն ոչ միայն տարեթիվը, այլև ամսաթիվը: Չարենցավանը այդ բացառիկ քաղաքներից է, քանի որ շինարարների հուշերում նշվում է որ քաղաքի շինարարությունը սկսվել է 1947թ ապրիլի 23ին:

[14] Տիրան Մարության - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

Մինչդեռ քաղաքի չունի Քաղաքի տոն, քաղաքի պատմություն նշելու որևէ միջոցառում: Մինչդեռ այսպիսի միջացառումները քաղաքային ինքնության վերաիմաստավորման հնարավորություն կարող են դառնալ՝ միավորելով համայնքի բնակիչներին ու պատմությունը: Իհարկե, այս տոնի կազմակերպումը, եթե սկզբնավորվի , չարե որ դառնա հանդեսային միջացառում, այլ հնարավորինս ներառական, ամսնակցային, քանի որ քաղաքի հիմնադիրները՝ քաղաքի բնակիչները և նրանց սերունդները հնարավորություն ունենան մասնակցելու և միասին ստեղծելու տոնը: Քաղաքի տոնի առթիվ որևէ փառատոնի կազմակերպումը՝ կապված քաղաքի բնակչության ներառման հետ, կարող է հիանալի լրացում լինել տոնին, օրինակ՝ քաղաքի առաջին բնակիչների շուրջ պատմությունների հավաքագրում -ներկայացում և այլն, կամ ժամանակակից արվեստի ու ստեղծագործողների ջանքերով քաղաքի պատմության վերաներկայացման փառատոն ծրագիր: Սա կարող է որպես առանձին ուղղության ներառվել մեր ռազմավարության մեջ:

Այգիներ

Չարենցավանում քաղաքային երկու այգի կա: Չարենցավանի քաղաքային զբոսայգին խորհրդային ինդուստրիալ քաղաքի առանցքային քաղաքային տարածքներից էր՝ «Չարենցավանի մշակույթի ու հանգստի քաղաքային զբոսայգին» /Ճարտարապետ՝ Ռուբեն Շահմուրադյան/, որտեղ մանկական ատրակցիոնները, խորհրդային քաղաքային պլանավորման բաղադրիչ շատրվանները, եղևնիների ծառուղիները, խնամված գազոնները, ծաղկաթմբերը ԽՍՀՄ փլուզումից 30 տարի անց նաև ըստ մեր հետազոտության արդյունքների քաղաքացիների նոստալգիկ հիշողության առանցքային կետերից են:

Քաղաքային զբոսայգին հետխորհրդային շրջանում երկարատև վարձակալությամբ է տրվել մի մասնավոր կազմակերպության: Ներկայումս վարձակալության պայմանագրով սահմանված պարտավորությունները տարբեր կերպ են մեկնաբանվում վարձակալի և համայնքի կողմից, արդյունքում մեր վերջին այցելության ժամանակ /ապրիլ 2022/ այգու աղբամանները լիքն էին, աղբը թափված էր այգու տարածքում, ընդհանուր տպավորությամբ այգին խիստ անխնամ էր:

Քաղաքային զբոսայգու տարածքում է գտնվում Չարենցի հուշասրահը և քանդակագործ Արա Շիրազի «Եղիշե Չարենց» արձանը /1987թ/, որը ներառված է Չարենցավանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում: Զբոսայգու սեփականատիրոջ նախաձեռնությամբ 2021թ արձանը ներկվել է՝ դրանով խախտելով հուշարձանների պահպանության կանոնները:

Քաղաքային այգիներից էր Խորհրդային Միության 50 ամյակին նվիրված հաղթանակի այգին, որտեղ 2021թ. Վորդ Վիժն կազմակերպության աջակցությամբ իրականացվել են

բարեկարգման աշխատանքներ, տեղադրվել է մանկական խաղահրապարակ: Այգու բովանդակային թիրախավորումը դեռևս թույլ է, կարիք կա վերամտածել այգու/տարածքի զարգացման և ակտիվ կիրառության հարցերը, օրինակ ստեղծարար արդյունաբերության ցուցադրությունների կամ արդյունաբերական ժառանգության վիզուալ ներկայացում:

Հուշարձաններ՝ խորհրդային և ժամանակակից

Մեր հետազոտության ընթացքում փորձել են հավաքագրել խորհրդային և հետխորհրդային Չարենցավան խորոշացված համայնքի հուշարձանները՝ նպատակ ունենալով Ծրագրի արդյունքում տպագրել այս հուշարձանների ալբոմ, որը քաղաքային լանդշաֆթի նորովի վերաիմաստավորման հենք կարող է դառնալ՝ նպաստելով ստեղծարար արդյունաբերության նոր գաղափարների առաջացմանը:

Այս հուշարձանների ցանկը և անվանումները, նկարագրությունները դեռևս համալրման փուլում են:

Այս հուշարձանների նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե խորհրդային շրջանում կառուցվում էին քաղաքային կյանքի և ԽՍՀՄ պրոպագանդիստական գաղափարներով և մշակութային քաղաքականության առաջնահերթություններին համապատասխան տարածքներ, ապա հետխորհրդային քաղաքային լանդշաֆթը արտացոլում է մեր ժողովրդի պատմության ողբերգական պահերի պատմությունը՝ պատերազմների զոհերի հիշատակին կառուցված հուշարձաններով:

Միաժամանակ այս հուշարձանային, հուշային տարածը ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային որևէ կերպ արտացոլված չէ Չարենցավանի ստեղծարար արդյունաբերության առաջարկներում, ինչպես նաև մշակութային կրթության բովանդակության մեջ: Չկան քաղաքի, համայնքի թեմատիկայով ստեղծագործություններ, քննարկումներ, կոմերցիոն առաջարկներ, օր հուշանվերներ: Համոզված ենք, ՄԶՌ մեջ այս բաղադրիչի ներառումը մեծապես կարող է նպաստել ինչպես համայնքի պատմության փոխանցման շարունակականությանը, այնպես էլ տնտեսական զարգացմանը:

Մշակութային տարածքներ-կազմակերպություններ

Չարենցավան համայնքում կա 5-16 տարեկան 6,360 բնակիչ, ում արտադպրոցական, գեղագիտական կրթությունը կազմակերպելու համար գործում են հետևյալ համայնքային կազմակերպությունները, որոնց ներուժը կարելի է հաշվառել ՄԶՌ մեջ՝ կարողությունների հետագա զարգացման միջոցով:

- *Չարենցավան համայնքի «Ա. Խաչատուրյանի անվան մանկական երաժշտական դպրոց»:* Երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1966թ., ներկայումս երաժշտական դպրոց հաճախում է 376 սովորող: Այս երաժշտական դպրոցը առանձնահատուկ է երգեհոնի

հետ կապված: Այստեղ է գտնվում Հայաստանի 6 և աշխատող 2 երգեհոններից մեկը: Երգեհոնի՝ երաժշտական դպրոցում հայտնվելը դարձյալ կապված է խորհրդային արդյունաբերական ժառանգության մշակութային ներգրավվածության հետ: 1986թ . Rieger-Kloss մակնիշի երգեհոնը Չարենցավանի հաստոցաշինական գործարանը, **(տնօրեն՝ Գրիգոր Երիցյան)** հատկացնում է Չարենցավանի երաժշտական դպրոցին, քանի որ խորհրդային մշակութային քաղաքականության պահանջներով ստանձնել էր դպրոցի «շեֆությունը», ժամանակակից լեզվով՝ հովանավորությունը կամ զարգացման պատասխանատվությունը: Երգեհոնի ուսուցում երկար տարիներ չէր իրականացվում, ուղղակի երգեհոնային համերգներ ու միջացառումներ էին կազմակերպվում: *Երգեհոնի առկայությունը դպրոցը և Չարենցավանը կարող են դիրքավորել այս բացառիկ գործիքի շուրջ՝ նպաստելով երգեհոնային երաժշտության զարգացմանը և լրացուցիչ հանրայնացնելով ինդուստրիայի և մշակույթի համագործակցության հնարավորությունները:*

Չարենցավանի երաժշտական դպրոցը բացառիկ է ևս մեկ առումով, Հայաստանում միայն այստեղ է, որ գործում է երգեհոնի դասարան, որտեղ կարող են ուսանել 5-16 տարեկան երեխաներ: Ընդ որում, համայնքապետարանի աջակցությամբ այստեղ լավագույն սովորողների ուսումնառությունը անվճար է: *Երգեհոնային դասարանի առկայությունը հնարավորությունն է Չարենցավանը դիրքավորել որպես երգեհոնային կրթություն ստանալու հնարավորություն, երգեհոնային կրթության հետ կապված տարբեր ոչ ֆորմալ միջոցառումների անցկացման հնարավորություն:* Երգեհոնի դասատու Վահագն Մարգարյանը բացառիկ մոտիվացված պրոֆեսիոնալ մոտեցում ունի Չարենցավանը երգեհոնային երաժշտության հանգույց դառնալու ծրագրերին:

Դպրոցում գործում են հետևյալ դասարանները սովորողների ներքոնշյալ հարաբերակցությամբ.

Ոլորտը	Աշակերտների թիվը	Տղա	աղջիկ
Դաշնամուր	86	18	68
Երգեհոն	5	1	4
Քանոն	37	0	37
Սանթուր	11	5	6
Շվի	28	28	0
Դուդուկ	28	28	0
Կլառնետ	10	10	0
Ուդ	7	2	5
Քամանչա	4	2	2
Ջութակ	12	1	11

Թավջութակ	8	2	6
Ալտ	2	0	2
Կիթառ	14	10	4
Դհոլ	34	34	0
Շեփոր	3	3	0
Վոկալ	51	16	35
Ժողովրդական երգ	36	24	12
Ընդամենը	376	164	192

Երաժշտական դպրոցի պատի մետաղյա կոռնկները «Գանգրահեր տղայի» արձանի քանդակագործ Խաչիկ Միրիջանյանի ստեղծագործությունն է, որը ձուլվել է Չարենցավանի «Կենտրոնաձուլ»-ում»:

Այս փաստը ևս վկայում է քաղաքի արդյունաբերական ժառանգության և մշակույթի ոլորտի սերտ կապի մասին: Այս ստեղծագործության մասին ցուցանակի տեղադրումը նոր կետ կարող է դառնալ քաղաքի մշակութային քարտեզում:

- *Չարենցավան համայնքի քաղաքային գրադարան*

Չարենցավանի քաղաքային գրադարանը բացի գրադարանային գործից, իրականացնում է նաև ակտիվ ստեղծագործական գործունեություն: Այստեղ կազմակերպվում են տիկնիկային թատրոնի ներկայացումներ՝ կապված գրական ստեղծագործությունների գեղարվեստական ներկայացման հետ: Ընդ որում առանձնահատուկ է, որ այս տիկնիկային ներկայացումները անդրադառնում են ինչպես դասական գրական սետղծագործություններին, օրինակ Հ. Թումանյան՝ «Շունն ու կատուն», այնպես էլ ժամանակակից հայերեն թարգմանված կամ հրատարակված ստեղծագործություններին, օրինակ՝ Շել Սիլվերթինի «Անձնվեր ծառը» ստեղծագործության հիման վրա պատրաստված ներկայացումը: Տիկնիկային ներկայացումների ստեղծման սցենարիստը և նախաձեռնության շարժիչ ուժը Արաքսյա Բալբայանն է, ում նախաձեռնությամբ 2013թ.-ից կազմակերպում են տիկնիկային ներկայացումներ երեխաների համար, ընդ որում գրադարանավարների ներգրավմամբ, ովքեր Արաքսյայի առաջնորդությամբ յուրացրել են տիկնիկավարի հմտությունները: Ստեղծարար արդյունաբերության տեսանկյունից այս գրադարանի տիկնիկները առանձնահատուկ են: Տիկնիկները հեղինակային են և պատրաստվում են Չարենցավանի հայտնի քանդակագործ Էդիկ Ծուղունյանի կողմից՝ գիպսից, ապա պապյե մաշե եղանակով: Այս տիկնիկները Չարենցավանի ստեղծարար արդյունաբերության արտահայտիչ դրսևորում են: Տիկնիկները կերպարային են, նաև տիկնիկային թատրոնի կազմակերպիչների ստեղծարարության շնորհիվ կարողանում են վերափոխվել նոր կերպարների՝ նոր ներկայացումների համար: Քանի որ ներկայացումները անցկացվում են Չարենցավանի գրադարանում, որը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, այս

ներկայացումները անվճար են, սրանց մասնակցում են համայնքի երեխաները՝ դպրոցներից, մանկապարտեզներից, ինչպես նաև նրանք հաճախ շրջում են տարբեր բնակավայրերով և նաև մասնակցում տարբեր մրցույթների: Նրանց բեմադրած «Շունն ու կատուն» ներկայացումը հանրապետական մրցույթում շահել է առաջին մրցանակ:

Չարենցավանի ամերիկյան անկյուն

Չարենցավանի քաղաքային գրադարանի տարածքում 2013թ.-ից գործում է Ամերիկյան անկյունը, որը Հայաստանում գործող 5-րդ Ամերիկյան անկյունն է: Այս նորագույն տեխնիկական հնարավորություններ ունեցող միջավայրը անվճար կրթական, մշակութային հնարավորություն է համայնքի բնակչության համար: Այստեղ անցկացվում են քննարկումներ, լեզվի ուսուցման դասընթացներ, տարբեր մշակութային միջոցառումներ: Ծրագրի տեսանկյունից անկյունը կարող է դառնալ համագործակցության հարթակ՝ քաղաքի մշակութային կյանքի վերա(իմաստավորված) ներկայացումների համար:

Չարենցավան համայնքի «Գառզուի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ

Դպրոցը հիմնադրվել է 1980 թ, ներկայումս ունի երաժշտական և արվեստի կրթության բաժիններ, հետևյալ կազմով.

Ուղղությունը	Աշակերտների թիվը
Դաշնամուր	52
Ջութակ	7
Թավջութակ	3
Կիթառ	11
Վոկալ	43
Քանոն	15
Դհոլ	17
Շվի	11
Սրինգ	1
Պարարվեստ	76
Գեղարվեստ	193
Թատերարվեստ	2
Ընդ	431
Դպրոցի աշխատատակազմ	43 մանկավարժ, որից 35 կանայք են

Մշակույթի տուն, 1947, Լուսանկարը՝ Տիրան Մարությանի անձնական արխիվից, մինչ այժմ՝ անտիպ

Շենքը, որտեղ ներկայումս գործում է Արվեստի դպրոցը, մշակութային հարուստ պատմություն ունի, քանի որ կառուցվել է հայտնի ճարտարապետ Տիրան Մարությանի կողմից Լուսավանի հիմնադրման սկզբում 1947թ և ծառայել է իբրև Լուսավանի, ապա Չարենցավանի մշակույթի տուն:

Արվեստի դպրոցում են գտնվում նաև Չարենցավանի ցուցասրահի նկարչական և քանդակագործական նմուշների մի մասը, որոնք կարող են տեղում նոր ներկայացման հնարավորություն դառնալ:

Արվեստի դպրոցը մասնակցում է համայնքային և ըստ անհրաժեշտության միջոցառումների, սակայն այստեղ, ինչպես նաև մյուս մշակութային ՀՈԱԿ-ներում մասնագետների կարողության զարգացման, նոր հմտություններ փոխանցելու կարիք կա, քանի որ ցածր աշխատավարձով պայմանավորված նախաձեռնողականությունը ցածր է, մինչդեռ ստեղծարար արդյունաբերության հմտությունների զարգացումը նոր տնտեսական հնարավորություններ կարող է ստեղծել: ՀՈԱԿ-ների դեպքում օգտակար կարող է լինել նաև միջհամայնքային, մարզային, հանրապետական, միջազգային համագործակցային հմտությունների զարգացումը, օրինակ փոխադարձաբար ծրագրերին, իրականացվող աշխատանքներին ծանոթանալու, խնդիրների, նոր նախաձեռնություններ քննարկելու, մշակելու, փորձի փոխանակման միջոցառումներ անցկացնելու և այլ նպատակներով:

- *«Արզականի արվեստի դպրոց» ՀՈԱԿ*

Այս դպրոցի մասին տեղեկատվությունը՝ տես Արզական բնակավայրի մշակութային ներուժի նկարագրության բաժնում

Արդյունաբերական ժառանգություն

Չարենցավանը Խորհրդային Հայաստանի արդյունաբերության կենտրոններից էր: Այստեղ գործում էին ամբողջ խորհրդային արդյունաբերության համար կարևոր ձեռնարկություններ, որոնց արտադրանքը կիրառվում էր Չարենցավանում, Հայաստանում, ԽՍՀՄ-ում և սոցիալիստական ճամբարի երկրներում:

Այս իմաստով քաղաքի բրենդի մեջ Չարենցավանի տարածումը, շողերի, ՃԱՌԱԳԱՅԹԻ ձևով Չարենցավանից դուրս առանցքային կետ կարող է դառնալ:

Միաժամանակ, ստեղծարար արդյունաբերության և մշակութային ռազմավարության համար անցյալում և ներկայում ստեղծարարության արդյունքների տարածվածության հետ հավաքելը՝ քարտեզագրման և շտեմարանավորման ձևով, կարող է Չարենցավանը դիրքավորել որպես արդյունաբերական ժառանգության հանգույց, որը ստեղծարար մտքերով սփռվում է և հետո ներկայացնում այդ սփռվածությունը:

Հետազոտության նպատակներից էր Չարենցավանի խորհրդային արդյունաբերական ձեռնարկությունների մշակութային ներուժի, տարածքների վերաիմաստավորման հնարավորությունների բացահայտումը:

Չարենցավանում գործող գործարանները որևէ սոցիալական, մշակութային ծրագիր չեն իրականացնում համայնքում, թույլ է կամ բացակայում է ինստիտուցիոնալ կապը համայնքի հետ: Հետազոտության ընթացքում այցելությունները գործարաններ ամենադժվար կազմակերպվողներից էին: Գործարանները մասնավոր են, ունեն սեփականատերեր կամ արտադրանքի առանձնահատկություններ, որոնք այցելուներ չեն ենթադրում: Միաժամանակ, գործարանների մասնավորեցումից ի վեր այս գործարանները կորցրել են խորհրդային արդյունաբերության մշակութային և սոցիալական պատասխանատվության մասին պատմությունների, փորձի հետ կապը, երբևէ ներգրավված չեն եղել համայնքի մշակութային կյանքում ներդրում ունենալու հնարավորությունների խոսակցության մեջ:

Հետազոտության ընթացքում 3-4 գործարաններում խնդիրը հանգամանալից ներկայացնելու արդյունքում տնօրենները անտարբեր չէին, թեպետ դեռևս հստակ չէին կարողանում պատկերացնել իրենց հնարավոր դերը համայնքի մշակութային կյանքում:
Հետազոտության շրջանակներում գործարանների հետ կայացած հանդիպումների արդյունքները տարբեր էին, մի դեպքում, ինչպես օրինակ Գործիքաշինական և Զուլակենտրոնի, պահպանվել էին տարածքների խորհրդային միջավայրերը և որոշակիորեն պատմության ներկայացման հնարավորություններ կային, սակայն այստեղ խնդիրը գործարանների սեփականատերերի հետաքրքրվածության կամ դրա բացակայության մեջ է: Մենք հետազոտության ընթացքում հանդիպել ենք տնօրենների կամ ներկայացուցիչների հետ, ովքեր հիմնական որոշում ընդունողները չէին:

Նախկին Կարի ֆաբրիկան, որը ներկայումս տնօրինում է Տոսպ ձեռնարկությունը և Լիզին գործարանը ցավոք վերջերս տեղի ունեցած վերանորոգումների արդյունքում կորցրել են նախկին խորհրդային պատմությունը ցույց տալու հնարավորությունները, թեպետ գործարանի տնօրենները պատրաստակամությամբ հանդիպեցին և քննարկեցին խնդիրը:

Բջնի գործարանի հետ հանդիպումը դեռևս չի կայացել, թեպետ գրավոր դիմել և ներկայացրել ենք խնդիրը շենքի անվտանգության աշխատակցին: Բջնիի մայր գործարանը, որը հիմնվել է խորհրդային շրջանում և կրում է իր շենքի տարածքում այդ գործարանի պատմությունը, գտնվում է Բջնի գյուղի տարածքում, իսկ արտադրական գործարանը՝ Չարենցավանում:

Մյուս գործարանները ունեն սպեցիֆիկ, որոշակիորեն ՊՆ կարիքների համար աշխատող ոլորտներ և հետևաբար հանդիպումներ չեն եղել:

Գործարանների հետ հետազոտության ընթացքի ու արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս Չարենցավանի արդյունաբերական ժառանգության շուրջ ունենալ ներկայացման մի քանի առաջարկներ.

1.Չարենցավանում արդյունաբերության թանգարանի ստեղծում, որտեղ կարելի է ներկայացնել Խորհրդային Հայաստանի, կամ Չարենցավանի արդյունաբերության պատմությունը՝ արտադրատեսակների, մարդկային պատմությունների, արդյունաբերության և մշակույթի կապերի, ժամանցի ու ենթակառուցվածքների պատմություններով:

2. Չարենցավանի արդյունաբերական ժառանգության վիրտուալ թանգարանի ստեղծում

3. Չարենցավանի արդյունաբերական ժառանգության շուրջ զբոսաշրջային երթուղու ստեղծում

4. Չարենցավանի արդյունաբերական ժառանգության պատկերների ներառում ստեղծարար ինդուստրիայի գաղափարների իրականացում, վիդեո խաղեր, գրաֆիտի, սթիթ արթ, հուշանվերների ստեղծում, տպագրություն ևն:

Հետազոտության նյութերով ստացված որոշ նախնական տվյալներ.

Հաստոցաշինական գործարան

Հաստոցաշինական գործարանը հիմնադրվել է 1958թ., առաջին տնօրենը Գեորգի Ռուսովն էր, ում արձանը ներկայումս գտնվում է Չարենցավանում: Այցելություն հնարավոր չի եղել իրականացնել:


Հաստոցաշինարարներն արտադրում են ոչ միայն հաստոցներ...

Վերջին տարիներին, ի թիվս ճանապարհային ինքնագնացների, բազմ կացարան մեր նայանկեցիկ եան մեր հոլովի յուս գործարաններ: Նրանց մի մասը կանգնել փակուղու առաջ, մի մասն էլ գոյատևեց ոչ-ստանդարտ ոչ-ինքնին ոչ-ինքնաբավ նամար ռոբոտիկեր այցելել գործարաններ:

Բանիցիկ պետի Հաստոցաշինական տանող ոչոլի:

Հաստոցաշինարանի գործարանի հիմնադրումը (հանիրեն (ստալինյան) ճիրատար հաստոցների գործարան) հիմնադրվել է 1958 թվականին, Գրանդերի հիդրոէլեկտրակայանի շինարարության սպասարկող մեխանիկական փիլոնորոգման արհեստանոցի բազայի վրա: Գործարանի հիմնադիր և առաջին տնօրենը Լուսինանեան Հովհաննես Ավետիսի էր:

Հայաստանի շրջանի հնարավոր գործարանի համար իմաստ ունենալու էր գործարանի հիմնադրումը:

Այն ժամանակ, արդյունաբերական հնարավոր շրջանում, այդպիսի հաստոցաշինարանի գերակայությունն էր: Գործարանի հիմնական արտադրանքը հաստոցներն էին (հիդրոստոյ և ֆրեզերային): Գործարանը կարգերի էր հրամանատարությունից: Ամենամեծ գործարանն էր արտադրանքի տեսակներին, մեծամասամբ՝ հաստոցներ:

Ամբողջ տարիներ: Ամենամեծարար ընդարձակում էր արտադրանքի տեսակներին, մեծամասամբ՝ հաստոցներ:

Կապված վերջին տարիների իրադարձությունների հետ հաստոցաշինական գործարանը կա ճգնաժամ և գնալու-գալու արդյունաբերության բնագավառում, գործարանի վերակազմակերպ կանգնելիքներ շատ բարդ խնդրի առաջ: Սակայն գործարանը դուրս գալու հնարավորություն ունեցավ էր:

Գործարանի ստեղծումը ՀԱՄԱՌՈՏԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏԱՅԻՆ՝ համերաշխությունը բնորոշվում: Շատերում էր կիրառվում գործարանի ստանդարտացումներ դարձրել էր:

Ուրախությունը պետք էր գնահատել Գեորգ ՍԱՌԱՔԵԼՅԱՆ ԼԵՆԻՆ Գեորգ ՍԱՌԱՔԵԼՅԱՆ՝ Ամա թե ինչպես հիդրոբարդ նա իրականանալ. «Գործարանի հիմնական արտադրանքը հաստոցներն են (հիդրոստոյ և ֆրեզերային): Գործարանը կարգերի է հրամանատարությունից: Ամենամեծ իր գոյությունը 40 տարվա, արդեն 60-70 տարվա:

Ամբողջ տարի հիմնական արտադրանքի տեսակներ գրեթե է աշխատանքային ծրագիր: Գործարանը մեր մի քանի տարվա ընթացքում և գրանտատարության համար մեծամասամբ (22 տեսակի արտադրանք): Մեր հաստոցների շարքում վաստակում են գործարանի լիցքավորող տարբերը, բոլոր տարածված տարածվերը (տարի բանվորներ, մանավանդ կանայք):

Նոր հաստոցներ են կրճատվում գի և ճանապարհների վերակազմակերպման միջոցներին և տարբերակներ: Գործարանի ինքնաշեմ և տարբերակ: Վերջին արտադրանքներ: Ամենամեծ հաստոցներ, որոնք տեղադրվել է Երևանի Հրազդանի շրջանի Մարգի գյուղում: Սրանք է տեղական արտադրության:

Կանխատեսում է կրճատվելու մեքենաների արտադրությամբ վերջին տասնամյակներ: Գործարանի հիմնական բարդերի մշակման, բրատատարության մասնագիտությունների: Այստեղ գործարանի բարդ ստեղծագործությունները աշխատում են: Մի Մարդ աշխատավարձ ստանում ամսական դրությամբ կազմել է մոտավորապես 5500 դրամ:

Հրամանը տարվ պետությունների մանիպուլյացիաներ, կրճատումներ: Գործարանի աշխատանքային բարձրացնելի աշխատանքներ: Վերջնական՝ ոլորտների գործարանում հիմնվել են նոր արտադրամասեր: Ներկայացրեցի խոշոր կատարվում են աշխատանքներ նոր տեսակի հաստոցների, մանրաքանակ, բազմաբնույթ հաստոցների: Գործարանի գլխավոր տնտեսագետ Ալեքսանդր ՍՈՍՈՒՐՅԱՆ՝ ասելիս հիդրոբարդ արտադրության:

Գործարանի գլխավոր տնտեսագետը Գեորգ ՍՈՍՈՒՐՅԱՆ՝ (Շար. 3-րդ էջում)



«ԼԻՋԻՆ» ՓՈՐՁԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՐԱՆ

Գործարանի գլխավոր ինժեներ Մանվել Եսայանը հայտնեց, որ 1994 թվականի սեպտեմբեր ամսից գործարանը դադարել է (լիզին) արտադրել: (Ի դեպ, Չարենցավանի «Լիզին» գործարանը նախկին ԽՍՀՄ-ում միակն էր, որ բյուրեղյա լիզին էր արտադրում). Լիզինի արտադրությունը դադարել է, որովհետև էլեկտրաէներգիայի անընդհատ անջատումները տեխնոլոգիական պրոցեսի վրա բացասական ազդեցություն են թողնում: Գոլանում է խոտան, որը թափվում է կոլտնի, իսկ դա մեծ վնաս է հասցնում գործարանին: Այժմ աշխատանքներ են տարվում այլընտրանքային ավելի քիչ էներգատար արտադրանք թողարկելու համար:

Այսօր գործարանն ունի բավական լավ հեռանկարներ, քանի որ այն ՀՀ-ում միկրոկենսաբանական արդյունաբերության առաջնեկն է:

Լիզին գործարանը ներկայումս Հայաստանի բժշկական սպիրտի արտադրության մեջ լիցենզավորված միակ արտադրողն է: Ընդ որում բժշկական սպիրտի ներկայիս արտադրանքի տարբերանշանի վրա գրվում է Լիզին՝ 1973.: Իսկ ի՞նչ է լիզինը և ինչպես է արտադրվել Չարենցավանում: Լիզինն անփոխարինելի ամինաթթու է, իսկ լիզինի արտադրությունը կենսատեխնոլոգիայի ոլորտ է: Խորհրդային շրջանում, հաշվի առնելով Ալիխանյան եղբայրների հեղինակությունը, որոշվել է Չարենցավանում կառուցել լիզինի արտադրության գործարան: Ընդ որում, ինչպես նշում է գործարանի ներկայիս տնօրենը, այն Չարենցավանում արտադրելը տնտեսագիտորեն ոչ ձեռնտու է եղել, քանի որ լիզինի արտադրության համար պահանջվում է ջրի և թթվածնի մեծ պաշար, ինչն ապահովելու համար լրացուցիչ ռեսուրսներ են ներդրվել խորհրդային տնտեսության կողմից:

Ինչևէ, Չարենցավանի Լիզին գործարանում արտադրվել է բյուրեղային լիզին, որն այնուհետև օգտագործվել է անասնաբուծության մեջ կերի հարստացման համար: Լիզինը որպես անփոխարինելի ամինաթթու մարդու օրգանիզմում ստացվում է սննդի միջոցով, բայց պակասորդի դեպքում լրացվում է համապատասխան հավելումներով: Լիզին գործարանը փորձել է արտադրել մարդու օրգանիզմի համար լիզին, սակայն չի հաջողել և կենտրոնացել է միայն անասնակերի հավելումների համար լիզինի արտադրության մեջ: Լիզինը միութենական ենթակայության գործարան էր, և որոշ ժամանակ հանդիսացել է Գենետիկա գիտահետազոտական հիմնարկի մասնաճյուղ: Ներկայումս Լիզին գործարանի արտադրական տարածքները գտնվում են այլ սեփականատիրոջ տնօրինման տակ: Գործարանի տնօրենը նշեց, որ վերջին երկու ամսվա ընթացքում գործարանում կարողացել են իրականացնել վերանորոգման աշխատանքներ, ինչի արդյունքում ցավալիորեն վերացվել են գործարանի նախկին տարածքի հետ կապված իրերն ու հիշողությունները:

Գործարանի տարածքը ներկայումս որևէ ֆիզիկական նմուշ կամ տարածք չունի Լիզնին գործարանի խորհրդային պատմության հետ կապված՝ բացի շենքի արտաքին կառուցվածքից և մուտքի մետաղյա շարժական դարպասներից: Անգամ գործարանի

ճաշարանի տարածքը ներկայումս վերածվել է սպիրտի արտադրամասի: Թեպետ գործարանի տնօրենը հետաքրքրված էր համայնքի մշակութային կյանքում ներգրավվածությամբ և առաջարկեց, որ համայնքապետարանը ստեղծի լավ կառավարվող, հաշվետու ու թափանցիկ հիմնադրամ, որտեղ գործարանները պարբերաբար ֆինանսական ներդրումներ կանեն՝ համայնքի մշակութային կարիքների լուծման նպատակով:

«Կենտրոնաձուլ»

1966թ հիմնադրվել է Լուսավանի «Կենտրոնաձուլ» ձուլագործական գործարանը, որը 1995 թ դարձել է Ձուլակենտրոն մասնավոր ձեռնարկություն : Այն ԽՍՀՄ 11 Центролит ներից մեկն էր, իսկ Հայաստանում՝ միակը, միութենական ենթակայության էր: Այս գործարանում են ձուլվել.

- Գանգրահետ տղայի արձանը

Գանգրահետ տղայի արձանը՝ բացման ժամանակ

- ՀՀ Ազգային ժողովի դարբասների զարդերը,

- Մարզահամերգային համալիրի համար ձուլվածքներ,
- Հանրապետության հրապարակի սյուները,

- Սիլ հյուրանոցի դիմացի սյուները
- Քաղաքային զբոսայգու շատրվանների շուրջ արջուկների արձանը /հեղինակ՝ Կոստանյան Մարտին/

- Իջևանի գորգերի գործարանի դարպասի նախշերը

- Հրազդանի կաթի գործարանի դարպասները

- Հրազդանի հովազը լճի մոտի
- Հայաստանի բոլոր գերեզմանների մետաղյա ճաղավանդակները, շատ գործարանների, հիմնարկների դարպասներ, անցակետերի դռներ, աստիճանների գեղարվեստական բազրիքներ, ցանկապատեր։
- Կիրովականի պետական թատրոնի վարագույրների հակաբեռը
- Չարենցավանի հաստոցաշինականի հաստոցների ձուլում, 600 դետալների արտադրություն, բարդ աշխատանքների պատվերների իրականացում, որի համար փոխանցիկ «Կարմիր դրոշ» է ստացել գործարանը։
- Արտադրել են կամ պատրաստել են նաև կենցաղային նշանակության իրեր. նրբաբլիթի/ բլինչիկի/ թավաներ, պելմեննիցաներ, խորը ալյումինի կաթսաներ, արիշտայի գրտնակ, գեղարվեստական սրճաղացներ։
- ԽՍՀՄ փլուզումից հետո նորակառույց եկեղեցիների կառուցման պահանջարկի պայմաններում նախաձեռնել են նաև եկեղեցիների զանգերի ձուլում, օրինակ Հրազդանի եկեղեցու, Ծալկայի, Մեղրաձորի։ Ընդ որում գործարանը եկեղեցիների զանգերի պատվերները իրականացրել է անվճար՝ միայն հումքի ծախսերը փոխհատուցելով։
- ԽՍՀՄ փլուզումից հետ պատրաստել են մոմակալներ, խաչքարեր, պատի լույսեր, նստարաններ, թուջից մոխրամաններ
- Պահածոների կափարիչների արտադրություն, ալյումինից թավա, ալյումինից բաղնիքի տրապ,

•Իրենց գործարանի դուռը

Գործարանը ստանձնել էր Չարենցավանի 5րդ դպրոցի «շեֆությունը»: Գործարանում ԽՍՀՄ փլուզումից հետո աջակցել են նաև տարբեր արվեստագետների հեղինակային նախագծերի իրականացմանը՝ Արա Շիրազ, Լևոն Թոքմաջյան և այլն:

«Լևոն Թոքմաջյանը եկավ Արամ Խաչատրյանի արձանը գիպսից սարքեց, չֆինանսավորեցին, կորավ, գնաց, 1990-ականներին, հետո ՀՀ գերբը արեց, էլի չտարան պատվերը»…

Ներկայումս գործարանն աշխատում է իր կարողությունների փոքր մասով:

Գործարանի տարածքում գտնվում է Չարենցավանի Չարենց-ներից ևս մեկը, թերևս ամենաանհայտը և գեղեցիկը՝ Չարենցի դիմապատկերով խաճանկարը, որի կամ վիրտուալ ներկայացումը, կամ թվայնացումը, կամ տեղափոխումը և քաղաքի այլ տարածքում տեղադրելը, կամ այցելությունների հնարավորություն ստեղծելը, կամ ստեղծարար արդյունաբերության առաջարկների մեջ ներառելը կարող են դառնալ խաճանկարի և Չարենցավանի «Չարենցյան ժառանգության» փրկության հնարավորություն:

Կարի ֆաբրիկա

1978թ. հիմնվել է որպես Չարենցավանի կարի ֆաբրիկա՝ ՀԽՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության ենթակայությամբ: Այստեղ արտադրել են կանացի ներքնազգեստ և լողազգեստներ: Գործարանն ունեցել է ցուցասրահ, նմուշներ, սակայն ԽՍՀՄ-ից հետո մի քանի անգամ փոխվել են սեփականատերերը և ներկայումս մեր հետազոտության իրականացման պահին ֆաբրիկայում աշխատում էր միայն մեկ աշխատակից, ով գործարանում աշխատել է 1970-ականներից: Ֆաբրիկան մասնաճյուղեր է ունեցել Երևանում /3 մասնաճյուղ-Քանաքեռում, Ավան, Օրբելի/, Սիսիանում, Սևանում՝ Նորաշենի և Գեղամավանի, Հրազդանում՝ Լեռնանիստի և Սոլակի: Հումքը ստանում էին Լատվիայի Լիեպայա քաղաքից, տեղում ձևարարները ձևում էին մոդելները, որոնք հետո կարի արտադրամասում կարվում էին: ե

Ներկայումս ֆաբրիկան ունի նոր սեփականատեր՝ «Տոսպ» ընկերությունը, ովքեր իրականացրել են վերանորոգում, վերազինում, նոր հոսքագծերի գործարկում և գործարանի խորհրդային պատմության հետ կապը կտրվել է:

Չարենցավանի խորհրդային մշակութային ժառանգություն/ տարածքներ

Չարենցավանի կայարանի շենքի ճարտարապետը Ռաֆայել Իսրայելյաննն է, կայարանի շենքը ներկայումս ավերված և գրեթե վթարային վիճակում է, գտնվում է Հարավկովկասյան երկաթուղիների տնօրինման տակ: Կայարանի շենքում նկարահանվել է հայկական խորհրդային կինոյի հայտնի ֆիլմերից «Նվագախմբի տղաները» ֆիլմից մի հատված: Կայարանի շենքում կար ռեստորան՝ հոյակապ լուսավոր սրահ, որն ուներ գեղեցիկ փայտե դուռ:

Չարենցավան կինոթատրոնի շենքը

Չարենցավանում գործել է Չարենցավան կինոթատրոնը, որի շենքի ներկայիս սեփականատերը ՀԱԵ Կոտայքի թեմն է: Հետազոտության շրջանակներում տեղեկացրել ենք Չարենցավանի եկեղեցու հոգևոր հովվին շենքը ներսից տեսնելու ցանկության մասին, ով առաջարկել է դիմել Կոտայքի թեմի առաջնորդին: ՄՀԿԶ կազմակերպության անունից գրավոր դիմել եմ Թեմի Առաջնորդին, սակայն այդպես էլ հետադարձ տեղեկություն կամ արձագանք չենք ստացել: Կինոթատրոնի շենքի ներսույթի կիրառումը մասնավոր սեփականություն լինելու փաստով այս պահին հնարավորություն չի ընձեռում այն ներառել ՄԶՌ գործողություններում, բացի վիզուալ ներկայացման հնարավորությունից՝ ստեղծարար ինդուստրիայի նախագծերի միջոցով:

Չարենցավանի ցուցասրահ

Չարենցավանում գործել է նաև տեղացի և ժամանակակից այլ նկարիչների, քանդակագործների աշխատանքների ցուցասրահ, որը 1990-ականներին լուծարվել է: Նկարների մի մասը բաշխվել է Չարենցավանի պետական հիմնարկներին և այսօր Չարենցավանի համայնքապետարանի, արվեստի դպրոցի, երաժշտական դպրոցի, արխիվի սենյակներում դեռևս պատերից կախված են ուշ խորհրդային շրջանի հեղինակների կտավները, որոնք վկայում են խորհրդային Չարենցավանի արդյունաբերական անցյալի մշակութային ներուժի մասին: Հուշասրահի պատմությունը, նկարները հնարավոր է վերա/շրջանառել/ թվայնացման կամ վիրտուալ շրջայցի կազմակերպման միջոցով:

Չարենցի հուշասրահ

Հուշասրահը ինստիտուցիոնալ իմաստով առանձին միավոր չէ, Գառզուի անվան արվեստի դպրոցի հաստիքացուցակում ներկայացված է որպես Չարենցի հուշասրահ:

Հուշասրահը քաղաքի համար լուրջ մշակութային ներուժ ունեցող տարածք է: Այստեղ անհրաժեշտ է արդեն շեշտը դնել ոչ թե Չարենցի կյանքը ներկայացնելու, այլ հուշասրահի՝ որպես Չարենցավանի պատմության մասին պատմող միջավայրի վրա:

Հուշասրահի պահպանման ծախսերը իրականացվում է համայնքի միջոցների հաշվին, հուշասրահի մուտքն անվճար է: Աշխատակիցը կարիք ունի մշակութային ցուցադրությունների նորարակական մոտեցումներով ներկայացնելու կարողությունների զարգացման:

Եղիշե Չարենցի 80-ամյակի առթիվ Խորհրդային Հայաստանում քննարկում են Չարենցի անվան անկյուն ունենալու միտքը և Չարենցի աղջիկներին առաջարկում են շրջել Խորհրդային Հայաստանի «չարենցյան» այուժեներով քաղաքներում և ընտրել, թե որտեղ ստեղծել այդ չարենցյան անկյունը: Ընտրությունը կանգ է առնում Չարենցավան քաղաքի վրա: Այդ ժամանակ դեռևս չկար նաև Գանգրահեր տղայի արձանը և քաղաքը չարենցյան դարձնելու խնդիր կար: Այս ժամանակ քաղաքի քաղխորհրդաի գործկոմի նախագահն էր Վլադիմիր Ավետիսյանը: Ընտրվում է քաղաքային զբոսայգու տարածքում մի հատված, որի կառույցներից մեկը հարմարեցվում է հուշասրահին: Այն վերանորոգվում է, Երևանի Եղիշե Չարենցի անվան տուն-թանգարանից համալրվում է նյութերով և իր դռները այցելուների առջև բացում 1978 թ. :

Ցուցասրահում ներկայացված ցուցանշումները օրիգինալ չեն, կրկնօրինակներ են: Օրիգինալ ցուցանմուշներից է Յուրի Պետրոսյանի կոփածո «Ամբոխները խելագարված» ստեղծագործությունը և

Հ.

Բաղդասարյանի Չարենցի դիմաքանդակը, որոնք թանգարանի հիմնադրամն -ժամանակ տրամադրվել են Երևանի Չարենցի տուն-թանգարանի կողմից:

Արդեն 45 տարի ցուցասրահի նմուշները չեն փոխվել, ընդամենը մասնակի համալրումներ են եղել, չի վերանայվել ցուցադրությունը, չեն վերաքննվել Չարենցի նորովի ներկայացման խորհրդային ձևերը: Հուշասրահի 45 տարվա հիմնադիր աշխատակից Ա. Արտուշյանը մեր հետազոտության ընթացքում նշեց, որ հուշասրահի պատմության, կառուցման, ձևավորման

մասին մանրամասն հարցերի առաջին անգամ է պատասխանում, թեպետ նա հուշասրահի պատմության բոլոր մանրամասների գիտակն է ու կրում է հիշողությունը: Կարևոր կլինի նրա մասնակցությամբ տեսապատումի գրանցումը և հանրայնացումը, պահպանումը: Ա. Արտուշյանի խոսքերով անգնահատելի են Վլադիմիր Ավետիսյանի անձնական ջանքերը թանգարանի բացման համար, երբ նա անգամ անձամբ ֆիզիկական շինարարական աշխատանքներ էր կատարում՝ բացմանը հասցնելու համար:

Այս նկարում երևում է հուշասրահի դուռը, որը պատրաստվել է գանգրահեր տղայի մոտիվներով՝ փայտի ու մետաղի համադրությամբ, դրա որոշ մասեր գողացվել են: Երևացող պատը Վլ. Ավետիսյանի առաջարկությամբ կառուցապատել է Սոլակցի վարպետը, իսկ Վլ. Ավետիսյանը անձամբ տնկել է բարդին, որն արդեն ամուր արմատներով ու հաստ բնով ծառ է:

Ֆանտան բնակավայր

Ֆանտանը Չարենցավան խորհրդային համայնքի փոքր բնակավայրերից է, բնակչությունը՝ 1071:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Ֆանտանի նկարագրությունը պաշտոնական էջերում շատ սուղ է, քիչ ինֆորմատիվ, մինչդեռ բնակավայրն ունի մրցունակության ներուժ և համայանքային համաչափ զարգացման մոտեցման դեպքում Չարենցավան խոշորացված համայնքի մի առանձնահատուկ բաղադրիչ կարող է ներկայացնել՝ դիրքավորվելով զբոսաշրջային և ագրոզբոսաշրջային, ինչպես նաև գյուղատնտեսական յուրահատուկ մշակաբույսերի աճեցման գոտի: Գյուղի անվանումը նախկինում եղել է Սուխոյ Ֆանտան՝ կապված ջրի սակավության հետ:

20-րդ դարի հիշատակություններում նշվում է, որ «Այս անունը գիւղը կրում է այն հանգամանքից, որ այստեղի միակ աղբիւրը կաթ-կաթ էր

բխում եւ յաճախ չորանում, հայերը կաթ կաթ բղխելը ի նկատի առնելով Կաթ կաթ էին կոչում, ռուսները նրա չորանալը ի նկատի առնելով չոր աղբիւր (սուխոյ ֆանտան) անուանում: Պարսիկներն էլ Տամջլու էին կոչում, որ նոյն նշանակութիւնն ունի: Բաւական ժամանակ երեք վերստ հեռու, Ալափարս գիւղի աղբիւրից ջուր կրելուց յետ, վերջապէս գիւղացիները համայնական ուժերով նոյն աղբիւրը վերանորոգեցին եւ առջեւում մի աւազան շինեցին, որպէս զի այլեւս ջրի պակասութիւն չզգան: Գիւղը բաղկացած է միայն մի, երկար եւ լայն փողոցից, որի երկու կողմում շինուած են քարէ, կղմինտրածածկ տներ՝ ընդարձակ գաւիթներով: Այստեղ է նաեւ Երեւանից Նոր-Բայազէտ տանող խճուղու փոստային կայարանը: Բնակիչները ռուս աղանդաւոր մալականներ են, 1851 թ. այստեղ գաղթած, ընդամենը 36 տուն, 110 ար. 96 իգ, միասին՝ 206 հոգի: Սրանցից 2 տունը՝ 17 ար. եւ 3 իգ. հայեր են: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ եւ բեռնակրութեամբ:»

Այնուհետև գյուղը բնակեցվել է նաև 1828թ ռուս-պարսկական պայմանագրի արդյունքում Պարսկաստանի Մակուի շրջանից տեղափոխված հայերով, նաև մոտակա լեռնային գյուղերից տեղափոխված հայերով, մոլոկանները և քրդերը ժամանակի ընթացքում հեռացել են գյուղից, ներկայումս գյուղում ապրում են հայեր: Գյուղը նաև ներդրումների համար հետաքրքիր փորձառություն ունի, քնաի որ այստեղ տներ են կառուցում արաբներ, Երևանից բիզնես ներդրումներ կան անասանաբուծության և երկրագործության ոլորտում: Դեռևս խորհրդային շրջանից ունի հացահատիկազգիների մշակության լուրջ ավանդույթներ և փորձառությունը, որը շարունակվում է նաև հետխորհրդային շրջանում:

Գյուղը առանձնանում է Հայաստանի համար սպեցիֆիկ, էնդեմիկ մշակաբույսերից հաճարի մշակությամբ (ըստ որոշ տվյալների Հայաստանի հաճարի պահանջարկի 80%-ն ապահովում է Ֆանտանը) ինչպես նաև ոչ այնքան տարածված սիսեռի, ոսպի տարբեր տեսակների, ցորենի, գարու մշակությամբ: Դեռևս խորհրդային տարիներից գյուղում գործել է կտավատի ձեթի ստացման սարք, որը Հայաստանում կտավատի ձեթի ստացման համար եզակի հնարավորություն է ունեցել: Ներկայումս գյուղը հայտնի է կտավատի ձեթի տնային ստացման նախաձեռնություններով:

Տեղական այս մշակաբույսերի շուրջ հնարավոր է ձևավորել նոր ստեղծարար առաջարկություններ՝ ագրոզբոսաշրջության, զբոսաշրջային տարածքի ձևավորման, գյուղատնտեսական արտադրանքի ուղղությամբ բրենդավորման, այս մշակաբույսերի, հումքի վերամշակման նորարար հնարավորությունների ուղղություններով: Գյուղը վերջին տարիներին զբոսաշրջային գրավիչ վայր է, քանի որ գյուղի տարածքով պետք է անցնել՝ Գութանասար հասնելու համար, որը պահանջարկված զբոսաշրջային կետերից է: Գութանասար այցելուների ակտիվ հոսքը գյուղին դեռևս որևէ տնտեսական եկամուտ չի

բերում, չկան հյուրատներ, հանրային սնունդի առաջարկներ կամ գյուղի տարածքի հետ կապված առաջարկներ:

Գյուղում կայուն զբոսաշրջային առաջարկների զարգացման համար կարող է սահմանափակում հանդիսանալ ջրամատակարարման խնդիրը, որը ամռան ամիսներին 1-2 ժամով է հասնում բնակիչներին:

Գյուղում կան հուշարձաններ, որոնք գյուղի պատմությունը ներկայացնելու հետաքրքիր ուղի կարող են դառնալ, այսպես գյուղի կենտրոնում տեղադրված է խաչքար աղբյուր՝ Կարապետյան Գարեգինի հեղինակությամբ՝ «Ֆանտանի ազատամարտիկներին» գրությամբ:

Գյուղն ունի հիշատակի պուրակ, որտեղ տեղադրված է 1980թ. կառուցված 2րդ համաշխարհային պատերազմի զոհերի հիշատակի հուշարձանը և զոհերի անուններով փորագրված հուշապատը: Պուրակում տեղադրված է Արցախյան պատերազմների ազատամարտիկների հուշաքարեր, խաչքար: Պուրակը ցանկապատված էր, բավականին կոկիկ խնամված, մաքուր, կային նստարաններ: Պուրակը գյուղի վերջում է և նայում է դեպի Գութանասար և կարող է ինտեգրվել գյուղի այցելությունների ցանկում:

Գյուղում չկա մանկապարտեզ, մշակութային որևէ արտադպրոցական պարապունքներ: Գյուղի երեխաները և երիտասարդները արտադպրոցական ժամանցը և կրթությունը ապահովում են Չարենցավան քաղաքում:

Գյուղի կրթական միջավայրը դպրոցն էր, որը մարզային ենթակայության է ինչպես Հայաստանի հանրակրթական դպրոցների մեծ մասը: Դպրոցում սովորում է 124 աշակերտ: Դպրոցում ներկայումս կազմակերպվել է գազաֆիկացում, ինչպես նաև համայնքի ներդրումների արդյունքում վերանորոգվել է դպրոցի սպորտային դահլիճը:

124 աշակերտների, երիտասարդների և գյուղի բնակչության համար Ֆանտանի մշակութային տարածքները խիստ սահմանափակ են, բնակավայրի մշակույթի տունը խիստ ավերված է, պահպանված է դիմային պատերը, տարածքը ծածկված է աղբով: Մշակույթի տունը կառուցվել է հավանաբար 1960-ականներին, պատկանել է կոլխոզին, ունեցել է պարի



խումբ, որն ունեցել է անգամ միջազգային ելույթներ: Մշակույթի տունն ունեցել է դահլիճ, բեմ, կինոդիտման հնարավորություն, և հետխորհրդային շրջանում ավերվել՝ շենքի տանիքի, սյուների և այլ պիտանի մասերի փոշիացման արդյունքում:

Ըստ գյուղի վարչական ղեկավարի՝ տարբեր արտադպրոցական խմբակների պահանջարկ կա, բայց քանի որ չկա համապատասխան տարածք, չեն կազմակերպվում: Միաժամանակ վարչական ղեկավարը ծրագրում է մշակույթի տան վերանորոգման ու վերականգնման հնարավորությունը՝ նշելով որ դիմել է կառավարություն:

Մշակույթի տունը գտնվում է գյուղի կենտրոնում, շատ հարմար վայրում, աղբից մաքրելու դեպքում կարող է ծառայել ստեղծարար հանդիպումների, արվեստային միջոցառումների իրականացման տարածք՝ որպես ավերակների նորովի կիրառման հնարավորություն՝ իհարկե հաշվարկելով շենքի ավերակների անվտանգության խնդիրները և ռիսկերը:

Մեր այցելության ընթացքում չէր գործում Ֆանտան-Երևան և Ֆանտան-Չարենցավան տրանսպորտ, սակայն բնակավայրի վարչական ղեկավարի հավաստիացմամբ այն առաջիկա օրերին պետք է գործարկվեր:

Գյուղում կա նորակառույց եկեղեցի և ևս մեկ եկեղեցի՝ 19-րդ դարի, Ս. Աստվածածին, որն ունի ուխտի օր՝ հունիսի 2-րդ կիրակին, որին բոլոր գյուղացիները մասնակցում են, խնջույքներ անում:

Ալափարս բնակավայր, բնակչությունը՝ 2430

Գյուղում կա դպրոց՝ 206 աշակերտով, մանկապարտեզ, որտեղ գործում է 4 խումբ 84 երեխայի համար /մեկ երեխայի ամսական վարձը՝ 5000 դրամ/:

Խորհրդային շրջանի մշակութային տարածքներից գյուղում պահպանվել է նախկին Մշակույթի տունը, որի ճարտարապետն է հայտնի Ռաֆայել Իսրայելյանը[15]: Մշակույթի այս ակումբը խորհրդային շրջանում ունեցել է ակտիվ կյանք: Շենքը կառուցվել է 1974թ, կահավորվել և շահագործման հանձնվել 1978/79թթ.

Շենքի կահավորման ժամանակ ակումբի վարիչ Վահրամ Ադամյանի հիշողություններով ակումի շենքում դահլիճի միջանցքի պատին նկարվել է Վարդան Մամիկոնյանի թեմայով որմնանկար: Այս որմնանկարը ըստ Վ. Ադամյանի Ալափարս գործուղված նկարիչ Մուրադյանին առաջարկել է նկարել այս ժամանակ գյուղի սովխոզի նախագահ Արսեն Հակոբյանը՝ կապելով գյուղի Ս. Վարդան եկեղեցու պատմության հետ:

[15] Ալափարս գյուղի ակումբը - Ռաֆայել Իսրայելյան (risraelyan.com)

Իսկ ինչ էր այդ պատմությունը: 1828թ. Մակու քաղաքից ռուս-պարսկական Թուրքմենչայի պայմանագրով հայերը տեղափոխվեցին Արևելյան Հայաստան, նրանք իրենց հետ բերեցին տեղի Սուրբ Վարդան եկեղեցու քարից, որի վրա ըստ ավանդության Ավարայրի ճակատամարտից հետո հոսել էր Վարդան Զորավարի արյունը, երբ նրա աճյունը տեղափոխելիս հանգստի էր դրվել այդտեղ:

Այս քարը ներկայումս դրված է Ալափարսի ս. Վարդան եկեղեցու բեմին և ամենամյա ուխտագնացության օրը մեծաթիվ այցելուներ են գալիս գյուղից, հարակից գյուղերից, Հայաստանի տարբեր շրջաններից: Ըստ հիշողությունների, սկզբնապես ուխտագնացության օրը նշվել է մայիսին՝ հավանաբար ի հիշատակ Վարդան Զորավարի մահվան, սակայն հետագայում, հաշվի առնելով, որ մայիսը բերքառատ սեզոն չի և գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացվում, տեղափոխվել է հոկտեմբերի վերջին շաբաթը:

Հետաքրքիր է, որ խորհրդային շրջանում Ս. Վարդան եկեղեցին չի վերածվել պահեստի՝ ինչպես գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին: Ավելին, խորհրդային Մշակույթի ակումբի որմնանկարը կապվել է Վարդան Զորավարի հետ՝ հավանաբար փորձելով աշխարհիկ բովանդակություն հաղորդել սյուժեին: Ըստ վարչական ղեկավարի հաղորդած տվյալների գյուղում հոկտեմբեր ամսին ծնված տղա երեխաների անվանակոչության մեջ հաճախ հանդիպող անուններից է Վարդանը:

Գյուղի մշակույթի տունը ներկայումս լուծարված է, շենքը Չարենցավանի համայնքապետարանի ենթակայության է: Շենքի մուտքի մոտ մշակույթի տան նախկին տնօրենի նախաձեռնությամբ հավաքվել են գյուղի ավանդական կենցաղին վերաբերող իրեր, որոնք ներկայումս անխնամ թողնված են նույն տեղում:

Մշակույթի տանը ներկայումս գործում է միայն պարի խումբ /արդեն 6 տարի/՝ պարուսույց Անուշիկ Գրիգորյան, ով գրանցված է Չարենցավանի Գառզուի անվան արվեստի դպրոցի հաստիքացուցակում:

Տարածքը որտեղ անցկացվում են պարապմունքները բարվոք չէ, պարուսույցի ընտանիքի աջակցությամբ որոշակիորեն բարեկարգվել է, խսիտ կարիք կա հատակը ծածկելու միասնական գորգի, քանի որ հատակին փռված են տարբեր չափի ծածկոցներ և երեխաները պարի շարժումներից դրանք եզրերը ծալվում են, խանգարում ապրելուն և փոշի առաջացնում սենյակում:

Չնայած այս հանգամանքին, խումբը լավ կազմակերպված է և մասնակցում է տարբեր մրցույթների, ունենալով ակտիվ ելույթներ: Խմբի պարային հագուստները ապահովվում են ծնողների ֆինանսական ներդրումների և կազմակերպելու արդյունքում, սակայն միատեսակ հագուստները քիչ են, բացի այդ չունեն տարբեր ելույթների համար նախատեսված հագուստներ, ինչը պարուսույցի գնահատմամբ կարևոր է խմբի կատարողական որակը բարձրացնելու համար:

Մշակույթի տանը մինչև լուծարումը գործել են տարբեր խմբեր՝ սպորտի, հելունագործության, փափուկ խաղալիքների պատրաստման, դիզայնի, սեղանի ձևավորման, տորթերի ձևավորման:





Մշակույթի տունը ունի մեծ դահլիճ, որը քայքայված վիճակում է, քանի որ տանիքից կաթող ջրերը վնասում են բեմը և շինությունը:

Բեմը պրոֆեսիոնալ բեմի տպավորություն է թողնում, եռաշերտ շարժական վարագույրներով, որոնք անգամ ներկայումս պահպանել են իրենց վառ գույները: Այս վարագույներից ետնաբեմինը պատկերում է բնանկար, իսկ առջևի վարագույրը՝ կակաչներով պարի տեսարանը: Այս վարագույրները կարիք ունեն անհապաղ պահպանության և նորովի կիրառման, քանի որ երկարատև անձնաջրերի մեջ մնալուց դրանք ուղղակի կքայքայվեն:

Մշակույթի տան բակում մշակույթի տան նախկին տնօրենի ջանքերով տնկված պտղատու այգի է, որը դեռևս նրա կողմից սրտացավորեն շարունակվում է խնամվել, իսկ բերքից օգտվում են գյուղացիները:

Գյուղի բնակիչները խորհրդային շրջանում աշխատել են Չարենցավանի տարբեր գործարաններում և տեղի սովխոզում, ինչպես նաև 1987թ. գյուղում բացված հացահատիկի սելեկցիոն կայանում: Այս աշխատուժը, որպես մասնագիտական, ԽՍՀՄ փլուզումից հետո փոշիացել է: Գյուղացիները սկսել են հիմնականում զբաղվել գյուղատնտեսությամբ կամ աշխատանք փնտրել գյուղից դուրս:

Գյուղում գյուղատնտեսական ուղղվածություններից է հաճարի և ազնվամորու մշակումը:

1955թ. հուշաղբյուր՝ «1941-1945թթ Հայրենական Մեծ Պատերազմում զոհված ալափարսեցի մարտիկների հիշատակին» գրությամբ:

Գյուղում ստեղծագործում են տարբեր արվեստի ոլորտի մարդիկ, ում մասին գյուղի վարչական ղեկավարը տեղեկություններ չուներ: Գյուղը կարող է դիրքավորվել կրոնական զբոսաշրջության ուղղությամբ, ավելի կոնկրետ Վարդան Զորավարի և Ավարայրի ճակատամարտի շուրջ իրադարձային տուրիզմով, որը կներառի Ս. Վարդան եկեղեցու պատմությունը՝ որպես Իրանի Մակուից բերված հիշողություն, Վարդան զորավարի հետ կապված քարի լեգենդով, խորհրդային մշակույթի տան Վարդան զորավարի որմնանկարով: Այստեղ կարող է օգտակար լինել զբոսաշրջային հստակ տեղեկատվության կամ ուղիների մշակման նախաձեռնությունը:

Գյուղի՝ արվեստի ոլորտի մարդկանց համար կարելի է ստեղծել աշխատանքային կամ ուսուցողական միջավայր մշակույթի տանը, որը կդառնա նաև շենքի պահպանության հնարավորություն: Կարևոր է նաև, որպեսզի նախաձեռնվեն մշակույթի տան բեմի վարագույրների, շենքի դահլիճի պահպանության լուծումներ:

Կարենիս բնակավայր

Գյուղի մշակութային կյանքի մասին տպավորությունները տխրեցնող էին: Համայնքի խոշորացումից հետո գյուղում դադարել են մշակութային միջոցառումները, օրինակ մայիսի 9, մարտի 8, Նոր տարի, որոնց անցկացման համար այլևս վարչական շրջանը ինքնուրույն տնօրինելու ֆինանսական ռեսուրսներ չունի. «առաջ տոներ էին նշում, խմբակներ կար, հիմա ոնց որ մեռած լինի գյուղը»,-նշում էր հարցազրույցների մասնակից գյուղացի կինը: Գյուղի երբեմնի ակտիվ մշակութային կյանքի մասին հիշեցնում էին շենքի պատերին անցկացված միջոցառումների մասին պոստերները:

Գոյուղում կա 1 դպրոց, մանկապարտեզ չկա,

Կարենիս բնակավայրի մշակույթի տունը լուծարվել է, սակայն այստեղ դահլիճը հիանալի պահպանված է, բեմն ունի շատ գեղեցիկ նկարազարդված վարագույր, բարեկարգ նստարաններ, որը կարելի է օգտագործել Չարենցավան համայնքի տարբեր մշակութային միջոցառումների համար:

Մշակույթի տան շենքը, որտեղ այսօր տեղակայված է գրադարանը և գյուղի վարչական աշխատակազմը, վերանորոգվել է 2002թ `ըստ ներկայացված տեղեկատվության Արգել ՀԷԿ-ի պարտքերի դիմաց, ինչը արդյունաբերության կողմից մշակույթի ոլորտում ներդրման լավ օրինակ է:

Կարենիսի հուշարձանների ցանկում ներառված է 20 հուշարձան, մեծամասնությունը խաչքարեր, տեղացիների ինքնության համար կարևոր է համարվում Կարենիքի վանքը՝ որպես 6-7րդ դարերի կրոնական կառույց, որի ուխտագնացության օրը նշվում է սեպտեմբերի վերջին կիրակին: Այս օրը բնակավայրի բնակչությունը այցելու է Կարենիսի վանքը, մատաղ է մատուցվում և շատ այցելուներ են միանում այս միջոցառմանը:

Գյուղի գրադարանում կա 5000 կտոր գիրք, գրադարանը նախկինում համայնքային պատկանելության է եղել, հիմա Չարենցավանի գրադարանին է պատկանում, ըստ գյուղապետարանի աշխատակիցների համայնքի խոշորացումից հետո ծրագրված է եղել գրքերը տեղափոխել Չարենցավանի գրադարան, սակայն վարչական ղեկավարի աշխատակազմը առաջարկել է , որ գրքերը չտեղափոխվեն, քանի որ բնակավայրի աշակերտների համար պահանջարկված է: Ներկայումս գրադարանը իր տեղում է, սակայն չունի գրադարանավար, վարչակազմի աշխատակիցներից մեկը ուղղակի կամավոր սպասարկում է գրադարանը. «մի քանի ժամ կարող է գիրք փնտրեմ, քանի որ ես մասնագետ չեմ, ծանոթ չեմ, չգիտեմ ինչպես ու որտեղից գտնել»:

Բնակավայրից Չարենցավան մեր հետազոտության անցկացման ժամանակ տրանսպորտ չէր գործում:

Գյուղում մշակույթի տան լուծարումից առաջ գործել են խմբակներ, որոնք աստիճանաբար փակվել են: Ըստ հետազոտության նյութերի երեխաների ծնողները պատրաստակամ են վճարել երեխաների արտադպրոցական կրթության համար, սակայն նման հնարավորություններ չկան, բացի այդ Չարենցավանի հետ տրանսպորտային կապի բացակայությունը համայնքի երեխաներին լիովին զրկում է մշակութային միջավայր ունենալու հնարավորություններիվ: Բնակավայրի վարչական աշխատակազմը լիարժեք վստահություն չունի, թե խոշորացված համայնքի դեպքում ինչպես են կարգավորվում նոր մշակութային խմբակների գործունեության հարցերը, արդյոք վարչական ղեկավարի աշխատակազմի շենքը, որը տեղակայված է մշակույթի տան շենքում իրավասու է տնօրինել տարածքները, թե յուրաքանչյուր անհրաժեշտության դեպքում պետք է դրա համար դիմի և անցնի համայնքապետարանից թույլտվություն ստանալու գործընթացին:

Գյուղի տնտեսական զբաղմունքներում առաջատար դեր է զբաղեցնում ազնվամորու տեղական «Գետաշեն» տեսակի մշակությունը, որը ունի մշակութային հատուկ պատմություն և կարող է դառնալ բնակավայրի մշակութային նարրատիվի և դիրքավորման մաս: 1991 թ Կոլցո գործողության հետևանքով Գետաշենի հայերը բռնի տեղահանվում են և սփռվում Հայաստանի տարբեր բնակավայրերում: Գետաշենում այդ տարիներին արդեն մեծ հռչակ ուներ տեղական ազնվամորին և գյուղացիների մոտ ձևավորվել էր սովորույթ, որ անգամ աղջկան ամուսնացնելիս մի կապ ազնվամորու տնկիներ տային՝

նորաստեղծ ընտանիքում տնտեսական ապահովության և ընտանեկան հիշողությունների փոխանցման ու պահպանման նպատակով:

Արդեն բռնագաղթի ժամանակ՝ մտածելով ապագայի տնտեսական հնարավորությունների

մասին, գետաշենցիները ուղղաթիռներով տեղափոխում են նաև իրենց համար կարևոր ազնվամորու տնկիները, լոբին և անգամ դրա «խչմարները» ՝փայտերը, սալորի տնկիներ, նաև տեղական հատուկ արժեքավոր տանձի սորտ, որը ներկայումս տեղափոխվել և աճում է Ռուսաստանում հաստատված գետաշենցիների հողերում:

Գետաշենցի որոշ ընտանիքներ հաստատվում են Կարենիս գյուղում, Ալափարսում և ազնվամորու մշակությամբ սկսում զբաղվել ոչ կոմերցիոն նպատակներով: Աստիճանաբար թե նրանք թե տեղացիները տեսնում են այս «Գետաշեն» տեսակի որակական ու համային առավելությունները, ինչի շնորհիվ ընդլայնվում են մշակության տարածքները: Տեղացիները ևս յուրացնում են այս սորտի մշակությունը, ինչի արդյունքում ներկայումս Չարենցավան համայնքում մոտ 40 հա ազնվամորի է մշակվում: Այս պատումը շատ կարևոր մշակութային պատում է, որը ցույց է տալիս տեղահանվածների տոկունությունը, նոր միջավայրում հարմարվելու հմտությունները, գյուղատնտեսական տեղական հմտությունների դերը զարգացման գործում, ինչպես նաև կոտրում է տեղահանվածների խեղճության մասին կարծրատիպը և ընդհակառակը թիրախավորում տեղահանվածների մշակութային ժառանգության դերի կարևորությունը ՝ արժանապատիվ ապրելու գործում, ինչպես նաև այս հյուրընկալ համայնքները դիրքավորում է որպես ապահով և արձագանքող նոր այցելուներին:

Արզական բնակավայր, բնակչությունը՝2872

Կոտայքի մարզպետարանի էջում «Արզականը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի ստորոտին, Հրազդան գետի աջակողմյան վտակ Դալար գետի ափին, ձորահովտում՝ մրգատու ծառերի մեջ» նախադասությունը ներկա ժամանակով կիրառված միակ նախադասությունն է: Մնացյալ ինֆորմացիան վերաբերում է գյուղի վաղ պատմական ժամանակներին, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել գյուղի հնարավորությունների մասին: Արզականը Հայաստանի խոշոր բնակավայրերից է , վարչական տարածքը կազմում է 8462.0 հա:

Գյուղում գործում է մեկ հանրակրթական դպրոց 300 աշակերտի համար, մանկապարտեզ՝ 50 երեխա, 3 խումբ

Արզականում մշակութային ենթակառուցվածքներից գործում է Արվեստի դպրոցը ՀՈԱԿ:

Արզականի արվեստի դպրոցում գործում են հետևյալ խմբերը

Ուղորտը	Աշակերտների թիվը	տղա	Աղջիկ
Քանոն	10	0	10
Պար	50	18	32
Ֆլեյտա	3	1	2
Նկարչություն	30	10	20
Դաշնամուր	12	1	11
Դհոլ	13	12	1
ասեղնագործություն	9	0	9
Վոկալ	8	-	-
Ընդամենը			

Խմբակների վարձավճարը սահմանված է 1500 դրամ, քանի որ համայնքային ֆինանսավորմամբ դպրոց է, ինչի շնորհիվ դպրոցը մրցունակ է մնում, գյուղից Չարենցավան արտահոսք չկա՝ արտադասարանային խմբակների հաճախման համար:

Արվեստի դպրոցը որպես մշակութային ենթակառուցվածք բնակավայրում ստեղծում է կայուն մշակութային միջավայր, որը կարողանում է համագործակցության հնարավորություններ կիրառել:

Այսպես, մշակույթի տան շենքի դահլիճը ավերված վիճակում է, ինչը արվեստ դպրոցը կարողանում է փոխհատուցել գյուղի հանրակրթական դպրոցի հետ համագործակցության շնորհիվ՝ կիրառելով դպրոցի դահլիճը: Արզականի արվեստի դպրոցի տարածքի մի մասն է վերանորոգված, ինչը ստեղծում է որոշակի կայունություն՝ խմբերի ձևավորման համար: Արվեստի դպորցի տարածքում է տեղակայված նաև գրադարանը՝ գրադարանավարով, որտեղ ևս կարգամակերպում են մշակութային միջոցառումներ և ներկայացումներ:

Արզականը Չարենցավան համայնքում առանձնահատուկ բնակավայրերից է, որն ունի զբոսաշրջային և սպասարկման ոլորտում մեծ ներգրավվածություն, քանի որ Աղվերանի հանգստյան գոտին մտնում է Արզական բնակավայրի տարածքի մեջ: Դեռևս խորհրդային շրջանից գյուղի բնակչության մեծամասնությունը աշխատել է առողջարաններում և հանգստյան տներում, որոնք հանդիսացել են խորհրդային արյդունաբերական ձեռնարկությունների հանգստյան տներ: Այս առումով Արզական / Աղվերանի ժամանակակից զբոսաշրջային ներուժը և հնարավորությունները պայմանավորված են բացառապես խորհրդային արդյունաբերական ժառանգությամբ և խորհրդային մշակութային քաղաքականությամբ: Այսպես, Արզական/Աղվերանում են գտնվել միութենական ենթակայության Չարենցավանի «Կենտրոնաձուլի», Կիրովի անվան քիմիական կոմբինատի, Լամպերի գործարանների, ինչպես նաև երկաթբետոնե կանստրուկցիաների գործարանի, ավտոձեռնարկության հանգստյան տուն-պանսիոնատները:

Խորհրդային միության փլուզումից հետո այս տարածքները սեփականաշնորհվեցին և ներկայումս հանդիսանում են մասնավոր սեփականություն: Չարենցավանի ՝ որպես

Հայաստանում տարածվող արդյունաբերական քաղաքի պատումի ձևավորման տեսանկյունից առաջարկվում է այս հանգստյան տների ներկայիս սեփականատերերի հետ փորձել քննարկել խորհրդային շրջանի այս շենքերի պատմությունների ներկայացման հնարավորությունները, ինչը կարող է օգտակար լինել նաև իրենց բիզնես գաղափարների բազմազանեցման տեսանկյունից: Այստեղ կարևորվում է համայնք-հետազոտական գիտելիք և հանգստյան գոտու սեփականատերեր կապի ձևավորումը և երկխոսության առաջացումը:

Այսօր էլ գյուղի բնակիչներից շատերն աշխատում են նախկին խորհրդային պանսիոնատների շենքերում նորովի կառուցված տարբեր ռեզորթներում ու հյուրանոցներում, հիմնականում որպես մաքրողներ, լվացարարաներ, խոհանոցի սպասարկողներ: Մինչդեռ, սպասարկման ավելի մասնագիտական հմտություններ պահանջող ոլորտներում՝ ինչպես օրինակ խոհարար, մատուցող, մենեջեր և այլն , գյուղի բնակչությունը առաջարկ չունի:

Այստեղ առաջարկում ենք հատուկ թիրախավորել երիտասարդների զբոսաշրջային և սպասարկման ոլորտում մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների մասին տեղեկացվածությունը, ինչը բնակավայրի կայուն զարգացման ներուժը կարող է դառնալ:

Արզականում ընդլայնվում է հյուրատների, հանրային սննդի ծառայություններ մատուցող օբյեկտների ցանցը: Գյուղը մեծ իմաստով բացի ցածր վարձատրվող սպասարկման ոլորտում աշխատողներ առաջարկելուց, այլ ձևերով ներգրավված չէ Աղվերանի հանգստյան գոտու զարգացման ծրագրերում:

Արզականի մոտ 200 հուշարձան ներառված է հուշարձանների ցանկում, մեծամասնությունը՝ խաչքարեր:

Չնայած այս մշակութային հարուստ պոտենցիալին, գյուղը չի մասնակցում զբոսաշրջային ներուժի իրացմանը, գյուղի տարածքը ներառված չէ զբոսաշրջիկների այցելություններում, թեպետ գյուղացիները կարողանում են որոշակիորեն իրացնել գյուղատնտեսական արտադրանքը՝ Աղվերանի հանգստյան գոտու այցելուների շրջանում: Արզականի զբոսաշրջային ներուժի լավագույն ներկայացման և կառավարմանը կարող է օգտակար լինել զբոսաշրջային տնտեսության տնտեսագիտական վերլուծությունը, ինչը դեռևս բացակայում է:

Բջնի բնակավայր

Բջնի բնակավայրը Չարենցավան համայնքի հարուստ պատմական ժառանգությամբ և զբոսաշրջային ներուժով բնակավայրերից է: Այստեղ շատ են պատմական հուշարձանները՝ ներառյալ Բջնիի ամրոցը, որը հայկական աշխարհիկ ճարտարապետության բացառիկ կանգուն հուշարձաններից է:

Բջնի բնակավայրում նախկին մշակույթի տունը ավերված և վթարային վիճակում է: Շենքի կառուցման պատմությունը հետաքրքիր է. դեռևս խորհրդային շրջանում Սունդուկյանի ակադեմիական թատրոնի շենքի կառուցման համար նախագծերի մրցույթ է հայտարարվում: Այս նախագիծը, որով կառուցվել է Բջնիի մշակույթի տունը, ակադեմիական թատրոնի մրցույթում չհաղթած նախագծերից էր, որը առաջարկվում է Բջնի և Մեղրաձոր գյուղերին՝ որպես մշակույթի տան նախագիծ:

Մշակույթի տունը կառուցվել է 1973թ.: Մշակույթի տան առաջին հարկում գտնվում է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հենրիկ Միրավյանի «Պատմություն և ներկա» որմնանկարը, որը վնասված է և 2018թ. գտնվում է ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ որպես տեղական հուշարձան:

Սակայն շենքը, որի պատին է որմնանկարը, խիստ վթարային է և ահռելի միջոցներ կպահանջվեն այն վերականգնելու համար:

Այստեղ մեր Ծրագրի դեպքում լուծում կարող է լինել դրա տեղափոխումը, ռեստավրացիան /եթե միջոցներ լինեն/ կամ թվայնացումը, արվեստային կրթական ծրագրերում ներառումը, ստեղծարարա ինդուստրիայի առաջարկներում ներառելը:

Մշակույթի տան երկարամյա տնօրեն է. Անդրեասյանի պատմություններում նկարագրվում է մշակույթի տան երբեմնի աշխույժ կյանքը, առաջին հարկում գործող սրճարան-ակումբի մոդելի գործարկումը, ինչը նորարարական էր խորհրդային գյուղերի համար: Մշակույթի տանը գործել է նաև էստրադային խումբ, որի անդամները սակայն Չարենցավանից էին: Այն ունեցել է շատ մեծ դահլիճ, կինոդիտման հնարավորություն: Է. Անդրեասյանի ջանքերով մշակույթի տան մուտքի մոտ սարքվել էր ջրավազան՝ ձկներով, լույսերով ձևավորված, որի կենտրոնում Է. Անդրասյանի կողմից քանդակած Բջնիի եկեղեցու մանրակերտը, ինչի տեղադրումը ԽՍՀՄ-ի ժամանակներում բավականին համարձակ քայլ էր: Շենքը 2000-ականներից տանիքից անձրևաջրերի հոսքի արդյունքում սկսել է քայքայվել, դահլիճի պատը ճաքել է և փլվել: Բոլոր պաշտոնական նկարագրություններում նշվում է շենքի վթարայնության մասին, սակայն տեղում մեր դիտարկումները ցույց տվեցին, որ շենքի մուտքը բաց է, երեխաները անարգել մուտքուելք են անում տարածք, բարձրանում են աստիճաններով, վազվզում, խաղում և որևէ զգուշացնող նշան, սահմանափակում, անվտանգության միջոցառումներ նախատեսված չեն: Այս դեպքում կարևոր է պլանավորել գործողություններ՝ այցելուների անվտանգության համար, քանի որ շենքի վթարային մասը անկանխատեսելի կարող է փլուզվել և աղետի պատճառ դառնալ:

Բջնիում 2021թ. «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ կողմից DVV- Հայաստան կազմակերպության աջակցությամբ իրականացված արիշտայի փառատոնը գյուղի ստեղծարար արդյունաբերության համար լուրջ խթան հանդիսացավ: Փառատոնն ունեցավ բազմաթիվ այցելուներ, բացի փառատոնային լավ կազմակերպված ինտերակտիվ ծրագրից, ուներ նաև տոնավաճառ և գյուղի բնակիչները այդ օրը կարողացան վաճառել արիշտա, գյուղմթերք, Բջնիի նկարչական խմբի սաները՝ իրենց նկարները, ինչը նորովի հետաքրքրություն առաջացրեց տեղական մշակութային ժառանգության հանդեպ: Մեր ծրագիրը կարող է Բջնիի փառատոնի հարթակը կիրառել՝ համայնքի մշակութային ժառանգության մասին լրացուցիչ նախաձեռնությունների համար:

Բջնին համայնքում դիրքավորվում է որպես գյուղատնտեսական և զբոսաշրջային կենտրոն, ինչի համար կան բոլոր պայմանները: Ծրագրի խնդիրը կարող է լինել այս ռեսուրսների թեմատիկ համախմբումը, կարողությունների զարգացումը, կազմակերպումը, ստեղծարար արդյունաբերության խթանումը:

ՄԱԿ-ի ինտեգրված գյուղական զբոսաշրջություն ծրագրով գյուղում ձևավորվել են տուրիստական նոր հնարավորություններ.մասնավորապես հանքային ջրի հանրային

համտես-աղբյուրի կառուցապատում, տեղեկատվական վահանակով զինում,

Բջնի ամրոցի իրերի ցուցասրահ գաստրոբակի ստեղծում,

Բջնիի կավագործության տարածքի կազմակերպում:

Բջնիում ստեղծագործում են նաև տարբեր շնորհալի արվեստագետներ և արհեստավորներ, ում մասին տեղակտվությունը ներկայացված է առանձին ցանկում:

Գործում է Բջնի-Երևան, Բջնի -Չարենցավան կանոնավոր տրանսպորտը:

Բջնին հատկապես վերջին տարիներին Երևանին մոտ գտնվելու արդյունքում ներառվում է դպրոցական դասարանային տարեվերջյան էքսկուրսիաների ցանկում, ինչը լուրջ հնարավորություն է բացի եկեղեցուց և ամրոցից գյուղի հետ կապված զբոսաշրջային պոտենցիալի իրացման համար:

Համայնքի մշակութային տարածքներ—խորհրդային մշակույթի տներ, դահլիճներ և հնարավորություններ

Մշակույթի տները Խորհրդային Հայաստանում, ինչպես և ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, խորհրդային «կուլտուրական շինարարության» հիմական ինստիտուտներից էին: Դրանք ձևավորվել էին՝ խորհրդային արդիականացման, հանրության մշակութային կյանքի աշխուժացման ու խորհրդային գաղափարախոսության իրականացման նպատակով:[16] ԽՍՀՄ փլուզումից հետո համայնքների մշակույթի տները իրենց առաքելության վերաիմաստավորման խնդրի առաջ կանգնեցին ու դրանից որոշները դարձան տարբեր արտադպրոցական խմբակների պարապմունքների իրականացման վայրեր, կամ համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպիչներ: Ներկայումս Չարենցավան խոշորացված համայնքում ներկայումս գործող մշակույթի տներ չկան: Նախկին մշակույթի տների շենքեր են գործել Ալափարս, Բջնի, Կարենիս բնակավայրերում: Մշակութային տների լուծարումը համայնքների խոշորացման արդյունքում համայնքների մշակութային կյանքի թուլացման, համայնքային ինքնության թուլացման, համայնքային կապերի, շփումների հնարավորություններից զրկման, միջսերնդային հաղորդակցության տարածքի, գյուղի բնակչության համար ժամանցի որևէ տարածքի բացառման հետևանքն ունի: Մշակույթի տները հետխորհրդային շրջանում հանդիսանում էին տարածք, որտեղ ժամանակ առ ժամանակ հավաքվում էին գյուղի բնակիչները՝ որևէ միջոցառման հանդիսատես լինելու կամ մասնակցելու համար: Սա ենթադրում էր առօրեականության փոփոխություն, առօրյայի բազմազանություն: Ներկայումս մեր այցելած գյուղերում համայնքային հավաքույթները մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով արդեն անցյալի հիշողություն են, ինչը մեր կարծիքով լրջորեն խաթարում է համայնքային ներդաշնակ կապերի պահպանմանը:

Ստորև ներկայացված է Չարենցավան համայնքի դահլիճների հնարավորությունները, ինչը կարող է օգտակար լինել համայնքի ապակենտրոնացված մշակությանի քաղաքականության գործողությունների պլանավորման , ինչպես նաև որպես լրացուցիչ տնտեսական հնարավորություններ ստանալու միջոց:

Դահլիճ		Տեղ	Վիճակ	Ինչի համար է կիրառվում
Երաժշտական դպրոց մեծ դահլիճ		350	Լավ	Համերգներ, երաժշտական միջոցառումներ,

[16] HAIA3_2-6,194-203,249-251.pdf

				այլ մշակութային միջոցառումներ
Երաժշտական դպրոց փոքր դահլիճ			բավարար	
Արվեստի դպրոց		250	լավ	Մշակութային միջոցառումներ
Ալափարսիի մշակույթի տուն		250	Բեմը վնասված, անձրևաջրերից քայքայվում է	Չի կիրառվում
Արզականի արվեստի դպրոց		-	քանդված	Չի կիրառվում
Կարենիս		130	Լավ	Հանդիպումներ՝

Ստեղծագործողներ

Մշակութային ժառանգությունը (լինի նյութական, թե ոչ նյութական, նախաարդյունաբերական կամ հետինդուստրիալ), մեծ ներդրում ունի քաղաքների և համայնքների յուրահատուկ կերպարի և ինքնության ձևավորման, ներկայացման մեջ: Այդ պատճառով այն կարող է մոբիլիզացվել՝ փորձելով ստեղծել տեղական մշակույթին հարազատ քաղաքային տնտեսական/մշակութային փորձառությունների հարթակներ: Չարենցավան քաղաքի դեպքում առավել նպատակահարմար կարող են դառնել մշակույթի և ստեղծարար արդյունաբերության ոլորտների (գրքեր և գրական լաբեր, երաժշտություն, կատարողական արվեստ, տեսախաղեր, տեսողական արվեստներ, ճարտարապետություն) խթանումը: Այս մոտեցումը հաշվի առնելով սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է Չարենցավանի ստեղծարար ոլորտի արագ գնահատման հետազոտություն:

Համայնքային կազմակերպություններից զատ Չարենցավան համայնքում ստեղծագործում են արվեստագետներ, արհեստավորներ, ստեղծարար արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներ: Նրանց հետ կապված քարտեզագրման, շտեմարանի ստեղծման աշխատանքներ դեռևս չեն արվել: Հետազոտության առանձին բաղադրիչ ենք դիտարկել Չարենցավան համայնքի ստեղծագործողների նախնական ցանկ-շտեմարանի ստեղծումը և նրանց կարիքների ու հնարավորությունների վերլուծությունը: Հետազոտության ընթացքում նախապես մշակված հարցարանի միջոցով դեմառդեմ հարցազրույցներ են իրականացվել 37

ստեղծագործողների հետ: Հետազոտության մասնակցել են 18 կանայք և 19 տղամարդիկ: Ստորև ներկայացվում են հետազոտության արդյունքները: [17]

Հետազոտության մասնակիցների տարիքը





[17] Հետազոտության ընթացքում ձնագնդի մեթոդով փորձել ենք կապ հաստատել հնարավորինս շատ ստեղծագործողների հետ, սակայն հետազոտության սահմանափակ ժամանակահատվածում հանդիպումներին համաձայնվել է մասնակցել 37 ստեղծագործող:


Զբաղվածության ոլորտը
Շոկոլադագործություն, օճառագործություն, 1, 5%
համերգի և ներկայացումների կազմակերպիչ, 1, 5%
դերասան /թատրոնի, կինոյի, հեռուստատեսության, 1, 4%
տեսարժան վայրերի կառավարում և այցելուների ընդունում, 2, 9%
մշակութային կրթություն (ասեղնագործություն, հեյուն, մակրամե) , 4, 18%
արվեստի ոլորտ, 4, 18%
պար/պարի ուսուցում, 8, 36%
դիզայն, 1, 5%
դերասան /թատրոնի, կինոյի, հեռուստատեսության
համերգի և ներկայացումների կազմակերպիչ
մշակութային կրթություն (ասեղնագործություն, հեյուն, մակրամե)
պար/պարի ուսուցում
դիզայն
արվեստի ոլորտ
տեսարժան վայրերի կառավարում և այցելուների ընդունում
Շոկոլադագործություն, օճառագործություն


Ինքնազբաղ արվեստագետներ
երգի պարի խումբ, 1, 7%
դուդուկագործ, 1, 7%
երգեհոն, 1, 7%
երաժիշտներ, 1, 7%
գեղանկարիչ, 7, 46%
արվեստի գործերի վաճառքի ցանցեր, 1, 6%
քանդակագործ, 3, 20%
գեղանկարիչ
քանդակագործ
արվեստի գործերի վաճառքի ցանցեր
երաժիշտներ
երգեհոն
երգի պարի խումբ
դուդուկագործ



Նշեք Ձեր արհեստի/արվեստի/ստեղծարար զբաղվածության հատկանիշները՝ գեղարվեստական ստեղծարարության ոլորտ

Նշեք Ձեր արհեստի/արվեստի/ստեղծարար զբաղվածության հատկանիշները՝ պարարվեստ




Նշեք Ձեր արհեստի/արվեստի/ստեղծարար զբաղվածության հատկանիշները՝ քանդակագործություն և մետաղագործություն
3
2
1
0
գիպս
քար
փայտ
բրոնզ
կավագործություն
մետաղագործություն,...
գիպս
քար
փայտ
բրոնզ
կավագործություն
մետաղագործություն, դարբնություն


ՆՇԵՔ ՁԵՐ ԱՐՀԵՍՏԻ/ԱՐՎԵՍՏԻ/ՍՏԵՂԾԱՐԱՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ՝ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ֊ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏ
յունակ 1
յունակ 2
յունակ 3
յունակ 4
յունակ 5
յունակ 6
2
1
0
երգեհոնահար
խմբավար
երգչախմբային դիրիժոր
միջոցառումների կազմակերպիչ
թատրոն՝ ֆրունզ
դուդուկագործ


Նշեք Ձեր արհեստի/արվեստի/ստեղծարար զբաղվածության հատկանիշները՝ տպագրություն
2
1
0
բաժակներ
քեյսեր
շապիկներ
սյունակ 1
սյունակ 2
սյունակ 3


Նշեք Ձեր արհեստի/արվեստի/ստեղծարար զբաղվածության հատկանիշները՝ զբոսաշրջություն և թանկարժեք մետաղներ
3
2
1
0
զբոսաշրջություն
ոսկյա և արծաթյա իրերի պատրաստում, վաճառք
Շոկոլադագործություն, օճառագործություն
զբոսաշրջություն
ոսկյա և արծաթյա իրերի պատրաստում, վաճառք
Շոկոլադագործություն, օճառագործություն

Բիզնես մտքերը, գաղափարները իրականացնելու հիմնական դժվարությունները



Ակտիվ եք Ձեր մասնագիտական ցանցերում





Չարենցավանի ստեղծարար ոլորտի նախնական ամփոփ հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ թեպետ համայնքում գործում են արհեստի, արվեստի ոլորտներով զբաղվողներ, սակայն նրանց ներուժը լիարժեք ինտեգրված և հաշվառված չէ մշակութային ոլորտի քաղաքականության գործողություններում: Հետազոտական տարբեր բաղադրիչների՝ հարցազրույցների, հանդիպումների և դասընթացների ընթացքի դիտարկումները ցույց են տալիս, որ Չարենցավան համայնքի ստեղծագործողները կարիք ունեն ցանցային համագործակցության, ստեղծարար հարթակների, հանգույցների ձևավորման, ինձը նրանց հնարավորություն կտա մասնագիտական ինքնազարգացման, առաջընթացի և նոր հնարավորություններ ու շուկաների ձևավորման:

Ձեր ներկա աշխատանքի տարածքը



Կուզեիք աշխատանքի տարածքը փոխել, ինչու և ինչպիսի վայրում կուզեիք լիներ աշխատանքային տարածքը



Ինչպես են փոխվել Ձեր կողմից կիրառվող տեխնիկաները վերջին 3-4 տարում



Ինչպես եք պատրաստում աշխատանքի գործիքները




Տեղյակ եք և կիրառել ե՞ք ավտոնատացված նախագծման համակարգերից CAD, CAM, 3D տպագրություն, լազերային կտրում, թվային արտադրություն
Չեմ կիրառել
տեղյակ եմ և կիրառել եմ
ոչ տեղյակ չեմ
այո տեղյակ եմ
0
2
4
6
8
10
12
14
16
Series 4
Series 3
Series 2
Series 1


Ինչպես են վճարում / մեծածախ և մանրածախ
բանկային քարտով, 1, 8%
առձեռն, 3, 23%
բանկային փոխանցմամբ, 9, 69%
առձեռն
բանկային փոխանցմամբ
բանկային քարտով


Որքանով եք կարողանում օգտվել ինտերնետից
40
35
30
25
20
15
10
5
0
կարողանում եմ ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ
կարողանում եմ հետևել թերթել կայքերը
կարողանում եմ գտնել անհրաժեշտ նյութերը և կատարել օնլայն...
կարողանում եմ լուսանկարներ վերբեռնել ինտերնետ
կարողանում եմ ֆայլեր վերբեռնել ինտերնետ
լրացնել օնլայն ձևեր
կարողանում եմ շփվել այլ մարդկանց հետ ինտերնետով
չեմ օգտագործում ինտերնետ ընդհանրապես
Series 1
Series 2
Series 3
Series 4
Series 5
Series 6
Series 7
Series 8


Ինչպես եք օգտագործում ինտերնետը Ձեր աշխատանքի համար
0
0.2
0.4
0.6
0.8
1
1.2
այլ, աշխատանքների օնլայն ցուցադրություն և...
Փնտրում եք նոր ոգեշնչման աղբյուրներ ու գաղափարներ...
կիրառում եք մրցույթների մասնակցելու համար
կիրառում եք իրերը վաճառելու հնարավորության համար
միայն գյուղերում՝ կարողանում եք կազմակերպել...
օնլայն խանութներից նյութեր գնելու համար՝...
օնլայն խանութներից նյութեր գնելու համար՝ Հայաստանից
Մեծածախ գնումներ կատարող գնորդների հետ կապ...
գնորդների հետ կապ հաստատելու համար
0
2
4
6
8
10
12
Series 10
Series 9
Series 8
Series 7
Series 6
Series 5
Series 4
Series 3
Series 2
Series 1


Համաձայն եք թե ոչ հետևյալ պնդումների հետ
մեր համայնքում չկան վայրեր, որտեղ կարելի է վաճառել մեր ստեղծագործությունները
ստեղծագործական աշխատանքը լավ միջոց է կարիերայի համար
ես գումար եմ աշխատում ստեղծագործական աշխատանքի միջոցով
ես չեմ կարողանում լավ գումար աշխատել արհեստի/արվեստի, ստեղծագործելու միջոցով
քիչ է պատահում, որ երիտասարդները ցանկանում են զբաղվել պրոֆեսիոնալ արհեստով
Արհեստը/արվեստը այլևս ակտուալ չէ
Արհեստը/արվեստը պրեստիժային է
արհեստների/արվեստի շուկան Հայաստանում զարգանում է
0
5
10
15
20
25
30
35
40
այո
ոչ


Sales
անմիջապես ընտանիքից
ազգականներից
հարևաններից
ինքնուս-սովորել եմ ինքս
սովորել եմ մասնագիտական, արհեստագործական դպրոցում
սովորել եմ միջնակարգ/ավագ դպրոցում
ունեմ բարձրագույն կրթություն
սովորել եմ վարպետի մոտ
5, 14%
0, 0%
9, 24%
12, 32%
10, 27%
0, 0%


Ուսուցանել ուրիշներին. Երիտասարդները հետաքրքրվում են Ձեր հմտություններով, արհեստով/արվեստով
35
30
25
20
15
10
5
0
29
5
այո
ոչ
չգիտեմ
այո
ոչ
չգիտեմ
Linear (ոչ)


Ձեր հասակակիցները կամ ձեզանից մեծերը հետաքրքրություն ցուցաբերել են Ձեր աշխատանքի նկատմամբ
այո, 16, 46%
ոչ, 19, 54%
նախընտրում եմ չպատասպանեմ, 0, 0%
չգիտեմ, 0, 0%
ոչ
չգիտեմ
նախընտրում եմ չպատասպանեմ
այո


Ուսուցանում, սովորեցնում եք մյուսներին
ոչ, 12, 38%
այո, 19, 59%
նախընտրում եմ չպատասպանեմ, 1, 3%
ոչ
նախընտրում եմ չպատասպանեմ
այո


Ինչպես է այս ստեղծագործական աշխատանքը տեղավորվում Ձեր առօրյա կյանքում
25
20
15
10
5
0
4
23
4
4
1
զբաղվում եք այլ կենցաղային գործերի հետ /երեխաների խնամք, տնային գործեր
զբաղվում եմ միայն օրվա որոշ ժամերին, որ հատկացնում եմ այս գործունեությանը
օրվա ընթացքում զբաղվում եմ, երբ կամենամ
զբաղվում եմ, երբ հիմնական/վճարովի աշխատանքից հետո ժամանակ է մնում
այլ՝ ամբողջ օրը
Series 1
Series 2
Series 3
Series 4
Series 5


Երբևէ մասնակցել եք օնլայն մարքետինգի կամ մասնագիտական դասընթացների
Այո , 4, 11%
ոչ, բայց կարիքը զգում եմ, 13, 36%
ոչ, կարիք չունեմ, 19, 53%
Այո
ոչ, բայց կարիքը զգում եմ
ոչ, կարիք չունեմ


Ինչպես եք օգտագործում համացանցը Ձեր ստեղծագործական աշխատանքների համար
Այլ, 1, 2%
Առաքում իրականացնել հաճախորդների համար, որոնք գնել ապրանքը, 9, 13%
Նոր արտադրանքի և դիզայնի համար մտքեր, մուսա փնտրելու, 13, 19%
մրցույթներին մասնակցելու համար, 3, 4%
հաղորդակցվել գնորդների հետ, 13, 19%
Աշխատանքները ցուցադրելու, ներկայացնելու, վաճառելու համար հնարավորություններ ն օգտագործելու, 25, 37%
Գնել նյութեր Հայաստանի օնլայն խանութներից, 1, 2%
Գնել նյութեր արտասահմանի օնլայն խանութներից, 3, 4%
Առաքում իրականացնել հաճախորդների համար, որոնք գնել են ապրանքը
հաղորդակցվել գնորդների հետ
Գնել նյութեր Հայաստանի օնլայն խանութներից
Գնել նյութեր արտասահմանի օնլայն խանութներից
Աշխատանքները ցուցադրելու, ներկայացնելու, վաճառելու համար հնարավորություններն օգտագործելու
մրցույթներին մասնակցելու համար
Նոր արտադրանքի և դիզայնի համար մտքեր, մուսա փնտրելու
Այլ


Երբևէ մասնակցել եք մրցույթների, ցուցահանդեսների, տոնավաճառների Հայաստանում կամ արտերկրում
ոչ, 11, 33%
այո, 22, 67%
ոչ
այո


Ինչին կարող են օգտակար լինել մասնագիտական ցանցերը
Չարենցավանում անհնար է համագործակցություն
համագործակցություն և փորձի փոխանակում
մշակութային կյանքի զարգացում և...
մշակությանին անկախ հանձնաժողովի ստեղծում
մշակութային միջավայրին հասանելիություն
զբոսաշրջության զարգացում և վաճառք
ինքնահիրացում
1
11
10
3
3
4
3
0
2
4
6
8
10
12
Series 4
Series 3
Series 2
Series 1





Ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների կարիքների ու հմտությունների նախնական քարտեզագրման վերևում բերված արդյունքներն էլ կարող են օգտակար լինել կարողությունների զարգացման տարաբնույթ արդյունավետ միջամտություններ նախաձեռնելու և իրականացնելու համար, ինչպես համայնքային մշակութային քաղաքականության կողմից, այնպես էլ հասարակական ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկելով այս արդյունքները և դրանցից բխող կարողությունների զարգացման կարիքները:

Ստեղծարար արդյունաբերության հոգատար քննարկման դեպքում այն կարող է դառնալ համայնքի տնտեսական զարգացման ներուժի լուրջ հնարավորություն:
ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրականացրած վերջին հետազոտություններն էլ փաստում են, որ «ստեղծագործողները ունեն ուժ և զորություն պահպանել երկխոսությունը և սոցիալական կապերը ամենադժվարին ժամանակներում»: